

1640

Прическа  
1934 г.

(13)

2011

Կ Ա Յ Ե , Մատենաւորի թվո 1

Ա Ա Յ

(Տիգրան Ց . Օհան)

Դ Ա Տ Ա Ս Ա Տ Ա Ն



Տպագրություն

Հրատարակություն

Կ. Տ Օ Ւ Ի Ւ Ե Ա Ն

Rue Nahr St. Michel

ՊԵՏՐՈՒԹ

1934

ՅԱԿՈԲ Փ. ՕՏԵԱՆ

ՎՃՏԱՀԱՐ ՀԱՅՐԻԿ

Անփառունակ տիրմիդ վրայ, փոխան յուշարձանի,  
դնում եմ ք ել ցաւերից հիստած եւ գրչովս կա-  
պած այս փնջիկը,

Արդիս

Ա. Ս Օ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ

Սկսած ենք ԴԿԾ, Մատեմատիկա անուան տակ հո-  
րատակել. Հ օյ հասարակութեան հրամանական համար  
ընկերաբանական գրգոյիներ ուղանց ասթիճ Ա. թիւր կը  
կազմէ անմանն հերոս ԱՊՈՒ (Տ. Օժեան) ԴԱՏԱՍՏԱՆը  
ուր հասարակուած է 1909-ին Կ. Պոլըս, այս գրեսիքը  
ՀՆՉԱԿԱՆ անուանի հերոս եւ յեղափոխութեան մեջ  
անգուգական տեղը գրաւող ՓԱՌԱՋԵՎ ի մասին գր-  
ուած է, որոն կը կցենք նաեւ վերջինին համառօս կեն-  
սագրականը :

Յաջորդի պիտի հասարակին դարձեալ նոյն նեղի-  
նակին զիրենեն ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ իւրաքանչիւրը  
10 ական Ա. ԴՀԿ.

Հրատակիչ  
Կ. Տօնիկեան



113575-42

4310 - 85

5077



Ա Յ Ո  
(Տիգրան Օհեան)

FFO



Փ Ա. Ր Ա. Մ Ա. Զ  
(Մատթեոս Սարգիսիան)

5077



## ԴԱՏԱՍՏԱՆ



### Ա.

Արտաքսի ափին, Արցախի լեռների ստւերի տակին,  
Փայտակարանի անտառածածկ բարձրութիւնների հան-  
դէպ նստած Մեղրի ուանում ապրող Սարգիսինց տան  
ճրագը տակաւին վառում էր, չնայելով նրան, որ կէս  
զիշերը արգէն անց էր կացել:

Հաստաբուն, ճիւղաշատ և սաղարթախիտ թթենին  
գրան էր կապել Սարգիսինց բակի գրայ Նրա հովանու  
տակ, թափանձիկ թիւլ-շղարշով ամփոփուած ճրագի  
շուրջը, տնընէկ կապնրտի երեսին ձգած փափլիկ տըմ-  
փիկների վրայ շուրջանակի բոլորել նստած էին նորա-  
հաս մի կին և երեք փոքրիկներ, որոնց մէծը հազիւ  
տասներկու, իսկ փոքրը միայն երեք տարեկան կը լի-  
նէին, մի երեստասարդ տղամարդ անհանգիստ քայլե-  
րով չափչփում էր բակը լայնքից ու երկայնքից;

Ամառնային գիշեր էր, լուռ և խաղաղ, միայն,  
երբեմն երբեմն թեթև մի քամի վզզում էր թթենու  
սաղարթախիտ կատարով և մեղմիկ տարութերում էր  
նրա կանանչ ու թաւշեայ տերեները, որպէսի օրօր  
երգեն քնի և հանգստութեան զրկումը ննջած յոզնա-  
տանջ մարդկութեան համար:

Քայլքլող երիտասարդը կարծես յոզնեց, նա մօտեցաւ փոքրիկներին, նստեց նրանց մօտ և թիկն տալով բարձին՝ ձգւեց մարմնի երկայնքով։ Փոքրիկները անմթջապէս վրայ թափւեցին, մէկը ընկաւ կրծքի վրայ ու սկսեց խաղալ նրա ընչացքի հետ, երկրորդը ծընկներին նստեց. առաւ ձեռքը զրեց իւր թաթիկների մէջ, չփեց, չոյեց, ապա բարձրացնելով տաքուկ տաքուկ պաչեց, յետոյ իր թշին կպցնելով այնպէս երկար ժամանակ մնաց։ Երբորդը՝ ամենից մեծը հանգարտիկ մօտեցաւ նրա բարձին, տեղաւորւելով այնտեղ, համբուրեց նրա երեսները, թուչը թշին հպած, քաղցրալուր տրտմալի ձայնով շշնջաց։—

— Հայրիկ ջան, քեզ մատաղ, ինչո՞ւ կերթաս, ախրգիշեր է, մենք մինակ կը մնանք, խեղճ ենք, մայրիկը կուլայ, վերջին խօսքերը արտասանելիս նա հարցական նայուած քով դարձաւ դէպի մայրը, որր ձեռքի կարը մի կողմ' ձգած, գլուխը ծռած-յենած ձեռքին՝ մտամոլոր նայում էր ճրագին։ Լա՛ւ, որ երթաս շուտով կը վերագառնաս, վերսկսեց աղջիկը, այնպիսի շեշտով որ թւուժէր թէ խիստ կարեօր մի հանգամանք մոռացել է, և միայն դրա դրական պատասխանը պիտի դար իրեն զոհացնելու։

— Հայրիկ ջա՛ն, մի գնա, մի՛ երթա, մեղէլ տար մենք էլ կը գանք, մայրիկն ալ կը բերենք, միասին կերթա՛նք, վրա տուին խօսքերի մի տարափ երկու փոքրիկները, ասես կարօտամաշ թռչունի ձագուկներ էին հաւաքւած, օտար երկրից վիրագարձած իրենց հրաազատի շուրջը ու ճլվլում էին։

Լուս էր երիտասաղ հայրը, վորսանակ պատասա-  
խանի, որ չեր կարողանում, դժւարանում էր, նա  
անդադար համբուրում էր զաւակներին:

Չեր խօսում և կի՞նը, մի անօրինակ թախիծ դէմ-  
քին նկարած, անծայր մի մտածմունք ճակատն ակօ-  
սելով հոսում էր հորդառատ, և աչքերը անհուն ծով,  
ծով զգացումների, նա մերթ երիտասարդին էր նայում  
մերթ փոքրիկներին և երբմնակի այրւող ճբագին:

Փոքրիկները անդադար կրկնում էին իրենց հարց ու  
պահանջները, սակայն հայրը լուս էր, նա ճգնում էր  
պատասխանի տեղակ, վաղաքուներով ու գուրզու-  
րանքով բաւարարել, բայց այս նրան չյաջողւեց, և  
վերջապէս նա բերանը բացեց:

— Հեռու չեմ երթար և չուտով կը վերադառնամ,  
սիրելիներ, պատասխանեց նա բոնադրօսիկ կերպով:

— Զէ՛, չէ՛ մի՛ գնա, մի գնա հայրիկ, ջան, մենք  
մինակ կը մնանք:

— Մայրիկը ձեզ մօտ է, ինչո՞ւ մենակ կը մնաք:  
Հեղինէ, ասաց, նա դառնալով դէպի կի՞նը, որը իր  
ամուսինն էր, հերի՞ք է լուս կենաս սիրելիս սրանց  
հանգստացրու և տար թող քնեն, ապա կրկին դառ-  
նալով զաւակներին շարունակեց, ելէ՛ք սիրունիկներս  
ելէ՛ք քնելու գնացէք, արդէն շա՞ա ուշ է, քնի բա-  
րօն եկել է ու նստել ձեր թերթերուքների վրայ. եթէ  
մի քիչ էլ ուշանաք, նա կը մտնի աչքերիդ, ու կը  
ննջէ այնտեղերում:

— Հանգստացնե՛լ, բայց ինչպէ՞ս, միթէ դա հընա-  
բաւո՞ր է, — սրտի խորքերից և նրա նրբին լարերի վրա

ՀԵ ՀՈՂ աղու մի ձայնով, մրմիջաց կինը մեկուսիշ  
շայրը զնում է, չարունակեց նա բայց ո՞չ չի զնում այլ  
փախչում է, զեռ այս բաւական չէ, նա պահանջում է  
որ իր զաւակները, հարազատները հանգիստ լինեն:  
Նա պահանջում է անկարելին, անբնականը: Քարու-  
քանդ աշխարհ, անիրաւ, անօրէն կարգեր, զայրագին  
հոգոց հանելով, վերջացնելով իր խօսքերը, վեր կացաւ  
բոնեց փոքրիկների ձեռները և համոզելով նրանց որ  
հայրիկը էր չի զնաւու, այս գիշերն էլ կը մնայ, տա-  
րաւ քնացնելու:

Երեածասարդը դարձեալ ոտքի ելաւ ու սկսեց ըստ  
տուաջնոյն քայել, նա յաճախ երկնքին էր նայում աստ-  
ղերի ու զոլոթեանը և այդպիսով հաշուելու ժամանակը  
և զանելով շատ ուշացած փոփում էր ինքնիրեն:

— Բայց ինչո՞ւ ուշանում են, ո՞ւր մնացին, չինի  
փորձանքի հանդիպեցին:

Ո՞ւր է զնում նո, և ինչպէս կինը ասաց ինչո՞ւ  
էր փախում, բաժանում ամուսնուց, թողնում զա-  
ւակները:

Ահա՛ թէ ինչո՞ւ:

Գողթանի Մեղրի տւանը, ներկայացնում էր մէկը  
այն վայրերից, որ մեր այս չարաբաստիկ երկրի վրայ  
ամէն տեղ բոլոր սահմաններում, երկնակամարի հա-  
նուր տարածութեան ներքոյ, իր նմանները ունի,  
աւելի կամ պակաս, այստեղ էլ, հարիւրաւոր ընտա-  
նիքներ, առանց սեռի ու հասակի խտրութեան, շուրջ  
տարին բոլոր, առանց եղանակի ու ժամանակի նըկաւ-  
տառութեան, աշխատում, բանում ու գործում էին,

մինչդեռ մի քանիսը, բազմայարկ ու գեղեցկոչէն ոը-  
ներում բնակողները ընդհակառակն իսկի չէին աշխա-  
տում, այլ հրամայում ու կարգադրում էին առաջին-  
ներին, ուտում, խմում և վայելում նրանց աշխատան-  
քը, իսկ միւսերը գետնափոր խուզիկներում բնակուղ-  
ները, միշտ անօթի էին, սովամահի ենթակայ, կիսա-  
մերկ, և իսպառ զրկւած աշխարհի մարդկային վայելք-  
ներից: Այսպէս էր վիճակը. Ասուածը այդպէս էր տը-  
նօրինել ու սահմանել ասում էին բախտաւոր վայելող-  
ները: Դարեր շարունակ գոյութիւն ունեցող օրենք-  
ները եկել հաստատել էին, կառավարութիւնները պա-  
հել պաշտպանել և, մինչեւ անդամ եկեղեցին, իր սուրբ  
հայրերով եկել էր օրհնել, սրբազործել մէկի լացը  
պայմանաւորուած միւսի ծաղրով, շատերի քաղցր՝ մի  
քանիսի կշտութեամբ: Ել ո՞վ ինչ պիտի աներ, ինչ  
կարող էր անել, ասում էին, բաղդ է, ճակատագիր է  
պիտի հնազանդել:

Սարգիսենց Փարամագ այսպէս էր անունը և բիտո-  
սարդ հօրը գիւղական վարժարանի տարրական դասըն-  
թացքը աւարտելուց յետոյ, բազտի մի յաջով կատա-  
կով ընկել էր միջնակարգ մի դպրոց: Այնտեղ նա շատ  
բան սովորեց, շատ գրքեր ու պարբերուկան հրատա-  
րակութիւններ կորդաց: Դպրոցական ընթացքը ա-  
ւարտելուց մի տարի առաջ հազիւ քստնամեայ Փարա-  
մագ, մասնաւորապէս հրապուրեց յափշտուկւեց այն  
ուսմունքն վարդապետութիւնով, սիրեց այն գիտու-  
թիւնը, որն ուսուցանում էր և ճամբայ ցոյց տալից  
թէ ի՞նչպէս պիտի անել, որ պատերազմները, դադա-

բին ու յաւիտեանս տեղի չունենան. որ մարդիկ իշխար չզրկեն ու իրար միս չուտեն և արթւնը ջրի տեղ չդործածեն, որ քաղծածները կշտանան, և վերջապէս թշւարութիւնը և խտրականութիւնները վերանան և սրանց փոխարէն թագաւորէ եղբայրական, մարդկային խաղաղ և երջանիկ կեանք. Այս ուսմունքը կոչւում էր Սօցիալիզմ-ընկերվարութիւն, և նա սովորեց: Նա կարդաց «Հնչակ» թերթում և Հնչակեան ծրագրի մէջ ու յաճախ ագահութեամբ լսեց այս գաղափարի առաքեալների բերանից փրկարար քարոզը: Փարամազ հասկցաւ և նւիրեց իրեն այդ նպատակի իրազործմանը, նա ուխտեց զինւոր դառնալ Հնչակեան դրօշի, և վերջ տոգորւած համամարդկայրին բարձր ըսկը զրունքներով, նա հայրենի զիւղ վերադարձաւ. կամաց կամաց զործի սկսեց, յանձն առաւ զիւղական ուսուցչի համեստ և չարքաշ պաշտօն, և այս վերջնոյն միջոցով նա հայթայթում էր իւր և իրայինների ապրուստը:

Բայց այս երկար ժամանակ չտեսեց, նոր գաղափար՝ ները զիւր չեկան այլոց քրտինքով սնանողներին. նըրանք նկատեցին ինչ որ փոփոխութիւն, անցանկալի զարթնում իրենց՝ ցայդ ատեն հաւատարիմ և հլու հընազանդ զիւղացիների մօտ, խուլ և թոյլ տրտունջներ տեսան, զարհուրեցին ու կատաղելով կարավարութեան օգնութիւն, սուրբ հայերի միջնորդութիւն և կրօնիդժոխի սպառնալիք աջակցութիւնը խնդրեցին երջանիկ վայելողները, և միւս կողմից սպառնական թափով իրենց մատները շարժեցին, կազմեց երբեակ նիզա-

զակցութիւն և գործը սկսեց : Կառավարութիւնը վըձաւեց բանդարկել նրան՝ եկեղեցու պետերը անէծք, բանագրանք կարգացին և Պարամազ սրտի անհուն ցաւով թողեց սիրած կոչումը, անօրէն հալածանքներից խոյս տւեց ու գարցաւ փախստական . . .

Երեար ժամանակիայ բաժանումից յետոյ, այսօր նա եկել էր տեսնելու իր անօղ հարազատներին և վերջին մնաս բարել առելու, որովհետեւ այս անգամ շատ հեռու պիտի գնար և գուցէ անդարձ մի ճամբով :

Փոքրիկները արդէն քնել էին : Ամուսինները, Հեղինէն և Պարամազ, թթենու տակին ազօտափայլ ձրագի մօտ, թեերն իրար ուսերին ձգած, զլուխ զլիսի խօսակցում էին երեմն երբեմն իրենց զրոյցները տաքուկ ու կարօտակէզ համբոյրներով քաղցրացնում : Թրար սիրող, ջերմ, անկեղծ սրտով կապւած կրկումարդ, զաւակների հայր, երիտասարդ ամուսիններ, անողոք, անխիղճ հալածանքներից ստիպւած էին իրարու թողնել, հեռանալ և գուցէ մինչեւ յաւիտեան :

— Դարձեալ զնում եմ, ասաց Պարամազ, առնական քայց տրումալի մի ձայնով, և այս անգամ շա՞տ հեռու Արաքսից էն կողմ, էն բարձր ու ձիւնու Մասիս սարերի էն միւս կողմը, արիւն է հոսում, քետերը հեղեղակել արիւն են տանում, ընդարձակ գաշտերն կարմիր են ներկւել, սարերն ու ձորեր, հովիտ, անտառներ վարգագոյն զգնուտ են հազել, տանջաստան աղետավայրի օեր հարազատների արտառոնքներից ծովեր են կազմել, նրանց ողբն ու լացը սարերն ու քարերն են մամոցնում, անէծք ու նզովք կարցաւ և սորվե-

ցուր մեր որդիներին որ ատեն, ամենասաստիկ կերպով  
ատեն արիւն թափողը՝ մարդկային, եղբայրների  
արիւնը :

— Դու, Փարամազ ջան ընդմիջեց Հեղինէ լացմցուկ  
շեշտով, դու պահանջում ես արգիլել զաւակներիդ,  
ատելի գարձնել նրանց ա'յն ինչ որ դու որդեգրեւ ես,  
բայց ինչո՞ւ այդպէս, եթէ վատ է' այդ դու էլ մի արա  
թո՛ղ զէնք ու զրահը . . .

— Ես էլ ատում էի և չեմ դադարել բուռն ուժով,  
բոլոր զգացումներովս և բանականութեամբս ատելուց  
բայց ինչ արած, վա՛յ, հազար վայ ու նախատինք շա-  
րասիրտ ձրիակերներին ու այլակերներին որոնք պատ-  
ճառ դարձան: Նրանք մեր խաղաղ խօսքի, մարդանւէր  
քարոզի զէմ թնդանօթների ահեղ բերաններ բաց արին  
մեր զրիչների զէմ սայրասուր և հատու սրեր, սպի-  
տակ թղթի զէմ՝ արեան ու պատերազմի դաշտեր ցու-  
ցուցին, և ելան կոտորել մի ամրող ժողովուրդ, քա-  
րուքանդ անել մի ամրող չէն աշխարհ, ինքնապաշտ-  
պանութեան վէհ ձայնը հնչեց բարձրաձայն, և մենք  
հարկադրւեցանք զէնք, այդ մահու գործիքը գործա-  
ծել, այս' մեղք-յանցանքը մերը չէ, ամօթ պատճառին :

Հնչա՛կ . . . խաղաղ զիշերւան, հանդարտիկ օդի ծալ-  
քերից յստակ ու սուր մի ձայն, մարդկային մի կանչ  
հնչեց հեռուից: Մերոնք են—առած Փարամազ:

Երկու սրտեր, երկու կրծքերի տախտակների տակ  
ուժգին բարախել սկսեցին, լեզուները կարկամեցին,  
Բաժանման վայրկեանն էր, անխօս գրկախառնւեցին

նրանք, արցունքները իրար խառնեցին և լեզուների պատմել արտայայտել չկարողացածը, տաքուկ կաթիւները իրար ականջին փսփսացին :

Հնչա՞կ . . . կրկնւեց նշանաձայնը և լեռներ ու ձորքեր անթիւ լեզուներով արձագանքեցին :

— Հեղինէ՛, բաւական է, շատ եմ ուշանում, զէնքերս բեր, ինքնիրեն բռնազբուիկ, զսպած ասած  
ՓԱՐԱՄԱԶ :

Եւ Հեղինէն բերեց, փամփշտակալերը խաչփակ ձգեց նրա ուսերից, և փամփուշտների պսպղոն փայլով կուրծքը զարդարեց. մէջքին կապեց դաշոյնն ու ատրճանակը, փոքրիկ պարկը լի հաց-պաշարով, և թիթեղիայ ջրխմբիկը կողքից կախեց և բոլորից յետոյ հըրացանը տւեց ձեռք, սուրբ և խորհրդաւոր հանդիսաւորութեամբ ճետենեալ խօսքերն ասելով :

— Գնա՛, Փարամազ ջան, զնա՛ և երբ կը սրբես ուրիշի թաց աչքը, այն ժամանակ յիշիր Հեղինէդ. զնա, բայց խնդրում եմ վերջին խօսքերով, որ քու զէնքերը երբէք ի չար չգործածես, չըլաւաճանես, և ի՞նչքան հնար է խնայես մարդկային կեանքին . . . :

— Ես քու ցանկութիւնը սրբութեամբ կը կատարեմ պատասխանեց Փարամազ, և վերջին համբոյքներ փոխանակելուց յետոյ, նա բարձրացաւ բակի ցածլիկ պատիցը, թռաւ դուրս և արագութեամբ հեռացաւ; Մի քանի վայրկեան տնցկացած երրորդ անգամ լուեց Հնչա՞կ որին Փարամազի ծանօթ ձայնը նոյնպէս բարձրագոչ պատասխանեց ՀԱՆԴԱԿԱԿ» . . .

Ջանգա՞կ ու Հնչա՞կ, հնչւում ու լսում են գիշերային խաւարի մէջ, լոյս, ազատութիւն սիրող հալա-

ծականների բերնից բայց երբ կը լինի որ Հնչակը ազատութեան աւետիսը հնչէ ազատ, համարձակ և Զանդակը քաղցրաձայն զօղանջով մեռնող բռնութեան անհետ կորչող անհաւասարութեան մահերգը երգէ... լոլահառաջ շեշտով տսեց Հեղինէն, որ թիկն էր տւել հաստաբուն ծառին, ասես տոկալ կարենալու, տանելու համար ուսերին ծանրացած ահազին վշտաբեռը

Արշալոյսը նորազարթ աչքերը բացեց թերթերունք ներից քունը թօթւելով, բարձրաբերձը սարերի կանանջն ու ծաղկունքը թրջող գովասուն ցողշաղով երեսը լւաց, ապա սկսեց իր զուգ ու զարդարանքը, հորիզոնի գրկից դուրս բերեց գիշերը այնտեղ պահած, իր ճակտի թափն ու պսակ ոսկիձածանչ արեգակը, գրեց իր գլխին Հուր ու բոց բռնեց ողջ շրջատատր, հազար հազար շոշիկ, ճառագայթները ամենուրեք թլթլոցին աղբիւրների ու տաւակների ցուրտ գրկեր ժամանակաւանք լողանքի համար, ամենուրէք շաղ տրւած ակներն ու զոհաբները երփներանդ աչիկներով ողջոյն ասացին :

Փոփրիկները տակաւին մուշ մուշ ննջում էին, զբլիխիկները ձգած, մազերն արձակած ու ցրիւ տրւած, թաթիկները երեսներին: Մայրը նրանց գլխավերեւ թիկըն տւած բարձին, զյուխով քարշ արած, կիսահակ նիրհում էր որպէս հաւերժական հարս: Արշալոյսի շողերն իս սլուխնդումով այստեղ էլ իջան, փոքրիկները զլուխնին փախցրին, թաթիկներով ծածկեցին աչքերը Զարթնեց իսկուհին, նստելով անկողնու մէջ շուրջը նայեց կիսաքուն, տեսաւ մօրը մինակ, իսկ հայրը չկար: — Մայրիկ ջան, մայրիկ, ասա ինձ շուտով, ուր է մայրիկը, միթէ նա գնաց...»

Կիսաքուն, երազող, նիրհած մայրը խուփ արած աչքերը բաց արաւ, նայեց զաւակին, լոիկ ու մնջիկ։ աչքերը աղբրակների ակունքը բացեց, արցունքի մարդարտէ կայլակները փայլեցին նրանց յստակ ու անհուն յատակում, ապա նա մեղմիկ ձայնով ասաց։

— Հայրդ գնաց, այս՛ գնաց, իմ սիրուն բալիկ։

Մի պահ տիրեց խորհին, տրտմալի և խօսքերով անարտայայտելի թախիծը՝ մայր և աղջիկ իրար նայեցին անխօս և աչքերով ինչ ու մտքեր ու յոյզեր վոխանակեցին։

Զիւնապատ սարերի կուսական կատարներից ծնած կանանչ անտառների և ծաղկալի հովիտների միջով անցած, առաւտեան թարմ զեփիւրը սրսփալով եկաւ, սուրաց, սւաց և սօսափեց թթենու տերեները։ Զեփիւռ-հովիկի թշուշ մրմունջին խառնւեց և արշալոյսեան թռչունների մեղեղիները, այդ ժամանակ երգեց և մայրը, նրա քաղցրահնչիւն դաշնակը միացուց բնութեան համերգին, ասես թէ կամենում էր և խնդրում, որ օդասլաց զեփիւռը տանէ իւր երգը և այն հնչեցնէ, սարերի գլխին, ժայռ քարի տակ գլուխը քարեայ բարձին դրած, հրածանը կրծքին դրկած իր սիրելի Փարամազին, նրա ականջին մրմնջան օրօր ասեն նրա համար։

Յանուն նոր կեանքի տանջուղ մարդկութեան

Զինուոր դարձաւ նա ուխտին Ճնշակեան

Մեկը՝ ամենին, ամենքը մեկին

Վեն սկզբունքին միտե հաւատարիմ։

Սուրբ գաղափարի դրօւը ձեռքին

Նա զնաց օգնել նիշ տանջւածներին,

Եւ ազատութեան անյագ ծարաւալ  
Մարտի դաւս նետւեց նա բուռն խանկով:  
Մեղքը մերը չէ, նախատինք երա՞նց,  
Որք եղան պատճառ այս գաժան չարեաց:  
Վայ երանց զիսին, մօս է փրկութեան  
Օրը պահնձալի. վախնան բռնութեան:  
Մը վեջին հարւած, գումք տանջուող մարդիկ,  
Սուրբ աշխատանին հարզաւս ուղիի,  
Եւ խարխուլ տեսքը անարդ բռնութեան  
Հիմնովին բարքանու կլինի անպայման:  
Մի՛ ուժեղ զարկ էլ, եւ՝ դրօտ յադրապամձ  
Հնչակեան ուխտի վեն գաղափարաց,  
Նեան նոր կեանի, հաւասարութեան  
Կը բերէ նամբաւ մեր ԱԶԱՏՈՒԹՅԱՆ...

Բ.

Մեծ դէպք անունով որակւած համատարած պատուհաս աղէտից, որ ընդհանուր և հասկանալի կոչումով աշխարհին յայտնի է Հայկական կոտորածներ քացորոշ յատուկ անւամբ. այդ ժհծ դէպքից հազիւմէկ մէկուկէս տարի էր անցել, բայց տակաւին, խանձւած և քարուքանդ աւերակների վրայ ջարդ ու փշուր ընկած ժողովուրդը, վիրաւոր, յուսակտուր և անօդնական ողբում էր և պատմում անտարբեր և անսիրտ մարդկութեան թէ ինչպէս ինքն էլ ցանկացաւ մարդու պէս ապրիլ իր բոնաւորած իրաւունքների վերագարձնելը պահանջել, և թէ՛ իր այս համեստ և մարդկային իղձերին ի՞նչպէս պատասխանեցին... : Զարդուկոտոր ժողովուրդը նստած աւերակների մոխիրներն փրփրում կայծեր գտնելու համար ողբում էր լալազին ձայնով իր վիշտը վլատակների տակ թաղւած նահատակներին լսելի դարձնելու փափառով :

Ծովակի ափին, կանտնչապատ լեռներով հովանաւորած ժայռ բերդ հսկայական և յաւիտենական պաշտպան մի կողքում առած, նստած էր Վան քաղաքը: Նա ընական գեղեցկութեամբ շաննման չքնաղագոյն քաղաքը, կրծքին ուսուցած այրւած քների հոգեհան մրմուրից, այնքան էր աղաղակել, այնպէ՞ս էր կանչել, որ այժմ ձայնը իսպառ կտրած, անծպուտ և ուշակուրոյն ընկել միայն միում էր:

Մարդիկ քիչ էր մնում հաւատային՝ թէ ըմբոստութեան ոգին յաւիտեանս վերացել է, երբ նորից խորհրդաւոր մի շուկ բերնէ բերան շրջել:

—Ելի եկել են, փսփսում էին իրար ականջին բնաւեր քաղաքացիները, բայց այնպիսի զգուշութեամբ և ախուվախով, որ՝ թւում էր թէ այդ մասին խօսելիս բերաննին և լեզուն այրում ու տապակւում է:

Զրոյցներ էին շրջում, չափաղանցուած, առասպելախառն; Ոմանք ոգեւորւում էին և ուրախութեամբ լցում մի մասը լուրջ մտահոդութեամբ տարւում իսկ փոքրամասնութիւնը գժզո՞ն էր ու կատաղած: Այսպիսի հոսանքներ զոյցութիւն ունէին հարազատ ժողովրդի ծոցում; մինչ տիրապետող տարրը հազար աչքերով և ականջներով հետեւում էր նորոյթին, զանազան միջոցներ, արտակարգ պայմաններ և խստութիւններ ստեղծելով:

Քաղաքի հրապարակներից մէկուն, ուր զալիս միանում էին երեք փողոցների բերանները, մի յորդահոս ազրիւրի զիսին, ստեղաշատ ուսենու հաճելի շաքի տակ ազրիւրի կողքին դրած աթոռների վրայ նստոտել էին մի խումբ մարդիկ հովանում և հանգստանում էին:

— Գիտե՞ս, լսե՞լ ես, Յակոբ ախսէր, էլի՛ եկել են... ինչպէս չեն վախենում, չեն խնայում իրենց երիտասարդութեան: Զարմանալի բան է նրանց անփորձ անվտանգ այստեղ հասնիլը, կտրել և անց են կացել ութ տաս օրերի ճամբար, սարերի կատարներով են քալեր, դիշերները ցերեկ դարձած, ճեղքել են ու անցել արնախում վայրենիների ահեղ բազմութիւններ, զինւորական խիտը ըլթաները ձիշտն առած՝ այս մարդիկ քաջ և անձնւ էր

զինելուց զատ, մի ուրիշ լաւ բան էլ ունին, գերբնաշկան մի բան, որ թերեւս մեր զինում չի տեղաւորւիլ:

Խօսողը անգագար աչքերը չորս բոլոր գարձնելով վերջացրեց խօսքը և սպասողական գրութեան մէջ մնաց դիմացինի պատասխանին:

— Բայց ո՞վքեր են այդ եկորները, Միսակ ախալէր, որոնց մասին այդքան բաներ ասացիր, հարցրեց առաջինք, որը ոյժ էր գործ զնում իրեն անդիտակ ձեւացնելու համար:

— Միթէ՛ զու այդքան անտեղեակ ես, վրաբերեց Միտակը, նրանք են ելի:

— Ելի՛ նրանք, բայց ո՞վքեր են:

— Նրանք էլի՛... մեր տղերք... Ճնչակեանները... հատ հատ և շեշտելով ասաց Միտակը, միշտ շուրջը նայելով, և ապա երբ վերջացրեց յաջողութեամբ, այսինքն առանց լրտեսւելու, կարծես մի մեծ բեռն ցած գրեց իր ուսերից: Յետոյ նա վեր կացաւ, աղբիւրի ջրով մի գաւ զովացրց երեսն ու ձեռները, որբւեց ու չորացրեց և նախկին տեղը բռնելով շարունակեց:

— Նրանք Պարսկաստանի սահմաններով են անցել և այսպես հասել, խումբը բազկացած է աւելի քան վաթուուն հոգուց: Արանց մեծամասնութիւնը այն կողմեր ապաստանած մեր փախստականներից են, իսկ մի փոքր մասը՝ էն կողմի մեր ախալերներից են, ասում են, շատ և ընտիր զենք ու մթերք են բերել:

— Փա՛ռք քեզ տէր, հօ՛ չմեռաւ կրիւը, հօ՛ չլսեց արդարութեան ձայնը, վատերը այսպէս կապասէին, և ինձ նահաստակ զաւակների գժբախտ հօր սիրտը խոցում խո-



ցոտում էին ամեն անգամ, ասելով թէ «ի՞ զուր մեռան գնացին երիտասարդ զաւակներդ, նրանց ճամբան շառունակող էլ չի լինի, նրանց ոյժը մի ձգելու վառող էր, ևն ևն», այժմ թո՛ղ տեսնեն; Ես դիտէի, Միսակ աշոպէր, բայց դիտամբ չզիտնալու զարկի, պիտի շատ զգոյշ լինել, յատեսները էլի շատցեր են; Յակոբը տակաւին չէր վերջացրել, երբ նրանց մօտեցաւ երրորդ օրի անձնաւորութիւն և ասաց.

—Բարեկամներ, պատրաստւէք, դարձեալ զուլումը կոխեց մեր զուոը, սարացած ազէտը պիտի ծանրանայ մեր վրայ, և այս անգամ անգարծ և անյոյս պիտի կորչինք:

—Ի՞նչո՞ւ, ի՞նչ կայ որ, միաձայն վրայ բերին առաջին երկուոը:

—Ի՞նչ հանգիստ և անվրդով էլ հարցնում էք, ուրեմն ոչնչից լուր չունիք էլի՛, զէ՛ լսէք, որ այդպէս է, չնչասպառ և կիսայանդիման տօնով շարունակեց նորեկը: «Է՛ն տնաքանդի տղերքը էլի՛ եկել են, կարծէ՛ք բաւական չեղաւ ինչ չարիքների որ առիթ դարձան, այժմ էլ եկել են պակասը լրացնելու, Յօ՛, մի մարդ չկայ դրանց ասէ. «Անիսե՛լք տաքզլուխներ, ի՞նչ կուզէք, ձեր ձեռքից ի՞նչ կըդայ, եթէ մեզ չէք խղձայ, դունէ ձեր կանաչ արևեներին խնայեց»:

—Լա՛ւ լա՛ւ, ախպէր կարծ կապիր, ընդմիջեց Յակոբը, նրանք իրենց զործը լաւ դիտեն և մեր խելքով չեն պար գայ: Հապա ի՞նչ կուզէիր, կը ցանկայիր ցկեանս նստիլ ույս աւերակների վրայ և միայն սըզալ, կամ բանաւորների ոտքը լիզել, որդուդ, հարաշատներիդ կեանքի թել կտրող ձեռները համբուրե՛լ:

Հապա՛ ինչ անհնք, «մի ձեռք որ կտրել չի լինի  
պիտի համբուրես ու զլխիդ դնես», ի՞նչ կորող ենք  
անել, խղճալի և կարեկցութիւն ու արգահատանք  
շարժող ձայնով պատասխանեց խօսակիցը: Գնանք ո՞ր  
անտակ ծովն ընկնինք, ի՞նչ սև կապենք: Քիչ առաջ  
կառավարութիւնը պահանջեց առաջնորդութանից և բո-  
լոր թաղապետներից, որ պահած յեղափոխականներին  
իրեն յանձնեն, հակառակ դէպքում նա սպառնում է  
քաղաքավարի կերպով, թէ գալիքների դէմ առնել:  
պատասխանատու լինել չեմ կարող:

—Այսպիսի բաներ տակաւին շատ պիտի տեսնենք  
եկող գնացաղ խմբերին՝ վերջ կոխւներին վախճան այն  
ժամանակ միայն կը հասնի, երբ նորերը դուրս կը  
գան կատարեալ յւղթութեամբ, պատասխանեց Յա-  
կոբը:

—Ուրեմն դարձեալ Մեծ-աղէտների նախօրեակու մն  
ենք ապրում, չշնջացին մնացեալ երկուսը:

—Այս', դժբաղդարար, որովհետև վամպիրը տակա-  
եին չի կշտացել:

Այս վերջին խօսքերի հետ միաժամանակ լսելի եղաւ  
զինուորական շեփոր իզիւ և անախորժ ձայնը նա հընչեց  
երկար և բոլոր զօրապահականոցներից արձագանք ա-  
ռաւ: Փողը զօրքերին ի զէն էր կանչում և յայտարա-  
րում պաշարողական գրութիւն:

Քաղաքացիները դողացին:

Զինուորաշարժը սկսեց:

Խաղարկում էին:

Տներից դուրս, հրապարակներում և փողոցներում,  
շուկաներում և խանութներում եղած բոլոր այլ հայ

ժարդիկ պաշարւեցին իրենց կեցած տեղերումը։ Տեղից ժամ գալը անկարելի էր շարժւողը զնդակահար կը լինէր։

Իսկ տներում կանայք . . . զաւակներ . . . ողբ ու վայն սուն, երկնի կամարներ թնթացնող ձայներով . . . Խռովորկում էին . . . Գիտէ՞ք ի՞նչ բան է այս, տեսնել էք . . .

Եւ այս դրութիւնը տեւեց ժամեր . . . քաղաքի բոլոր հայարնակ թաղերում . . . բայց տակաւին անհետեւանք, յեղափոխականներին գոնել չէին կարողանում։

Յանկարծ լսելի հղան հրացանի մի քանի ճայթիւններ; Հեծեալ եւ հետիւոտն զինուորների մեծ խումբերը, յայտնի պետերից առաջնորդւած, գիմեցին զէպի այն կողմը ուսկից լսեց հրացանազարկը։

Մատնանշւած էր լրտեսի կողմից յեղափոխականների պարագլնի թագսոսցը, եւ մեծ բազմութեամբ խուզարկուներ հաւաքւած այդ տան շուրջը, և ժեղեղ կերպով մի քանի տաել շղթայել էին բան և սպասում էին հրամանատարի գալստեան ու կարգադրութեան, ըստ զինուորներից մէկը պատուհանում նկատելով օտարականի զգեստով կեցած մի մարդու, հրացան էր արձակել և որին հետեւել էին իր ընկերները։

Մինչ զբում միջնցներ էին որոնում տունը գրաւելու և բնակողներին ձերբակալելու, մինչ հարիւրաւոր հրազէնների բերանները պատրաստ էին կրակ տեղալու տանը վրայ, և միւս կողմից լեփ-լեցուն տակառով նախթն էր սպասում հրդեհ ձգելու, ներսում կատարում էր հետեւեալը, պարզում էր այս պիսի տեսարան։

Յեղափոխական խմբի առաջնորդը, շուրջն առած երեք չորս ընկերները ու հիւրասիրով տան երիտասարդ զաւակները զէն՝ ի ձեռին պատրաստ ում էին կուել դիմագրիլու. Նրանք ծրագրում էին դիմագրութեան կերպը, դիրքերը ևն.։ Տիրում էր կատարեալ ոգեւորութիւն; Եւարումի, վախի ուէ սի աննշան արտայայտութիւն չէին կրում դէմքերը, «մեռնինք, մէկտեղ, ապրինք մէկտեղ» խօսքերը ամենքի շրթների վրայ կը թլթլար։

— «Մահն ընկերով հարսնիք է», ժողովրդական սա փիլիսոփայական գործւածք ասւածքով մէջ մտաւան տիրուհին։ Համակրելի արտաքինով եւ դիւրեկան ձայնով մի կին էր նա, փորձւած եւ այսպիսի անցքերի յաճախակի ականատես եղած։ — Բայց չպէտք է մոռնալ որ ամեն մահը մահ չէ, ամեն մահ՝ անմահութիւն չէ, ամեն մեռնիլը, քաջութիւն անձնւիրութիւն չէ։ Կան կեանքեր, ապրող, չմահացող կեանքեր՝ որոնց առաջ ինք՝ ամենասարսափելի մահն անդամոչնանում է, երբեմն ապրելու զոհաբերութիւնը գերիքեր է ամենատեսակ ողջակէզներից։ Զաւակներս, ներկայ գէպքում ես գտնում եմ, որ ձեղ աւելի հեշտ է մահին ընդառաջ զնալ, քան կեանքին, եւ երկրորդ՝ ամենաստոյգ կերպով ձեր մահից առաջ եղած ընդդիմադրութիւնը կը հրահրէ սկսող հրդեհը և՝ ձեղ հետ, մեղ հետ, ամբողջ քաղաքը անսփոփ թշւառութեան կը մատնէ։

— Ուրեմն գու, մայրիկ ջան, առաջարկում ես անձնատուր լինել եւ այն էլ զէն ի ձեռին, ընդմիշեց նրան երիտասարդ զաւակներից Արմենակը։

Երիտասարդ խմբապետը ուշադրութեամբ լսում էր  
տիկնոջը և մերթ ընդուերթ զննող աչքերով նայում էր  
դուրս, հետեւում թշնամու դործողութիւններին:

— Բնկե՛ր, ասաց խմբապետը, մերսնց արդեն ձեր-  
բակալիցին ու տարան. ես տեսայ Մելքոնին, Աւոին և  
Վարդանին իրենց տաճեակներով՝ անզէն և կիսամերկ:  
Այս ի՞նչ բան է, ըստ երեւոյթին մենք հետապնդւած  
ենք դաւաճանների վարպետ աչքերից: Ապա՛ խօսքը  
տիկնոջ ուղղելով ասաց նրան, — Ե՞այրիկ, մենք հրա-  
պարակ ենք եկել հանրութեան համար, ժողովրդի հա-  
մար, եթէ նրա չահը կը պահանջէ մեզնից առբել ու  
տանջել թրամկան քանտերում, պատրաստ ենք կա-  
տարելու:

Այսպիսի խօսակցութիւն տեղի կունենար ներսում,  
երբ յանկարծ հրացանների համազարկը ճռոաց և մի  
խումբ սստիկաններ ու զօրքեր սուսերամերկ և լիքը  
հրացաններով ու ատրճանակերով, զանազան կողմերից  
ներս խուժելով, անկարելի դարձրին այն տեղ եղող-  
ների ու և է չարժումը:

Գ.

Ամիսներ էին անցկացել, ոոյն իսկ տարին լրացաւ  
և տակաւին ո՛չ մի գատավարութիւն տեղի ունեցաւ :  
Կամաւորների, խմբապետի և նրանց հետ բանտար-  
կւած հարիւրաւոր, զործին անտեղեակ զիւղացի և  
քաղաքացի հայերի կացութեան, տանջանքների և  
չարչարանքների մասին մէկը միւսից սարսափելի  
այնպիսի բաներ էին պատմում, որ լոռզները ականջ-  
ները գոցելով, անիծելով և հառաչելով վախչում էին :

Վերջապէս եկաւ, հասաւ դատավարութեան օրը,  
Օգոստոսի առաջին օրն էր, տաք և պայծառ:  
Դատարանում աշնքան լոիտ էր մարդկային բազ-  
մութիւնը, որ առանց այն էլ տօթագին օգը անշնչելի  
էր զարձել: Զօրքերն ու ոստիկանները հազիւ էին  
պահպանում կարգը: Մեզագրեալներին, որոնք մի քանի  
տասնեակ երիտասարդներ էին, առաւօտ վաղ, հասա-  
րակութիւնը հաւաքւելուց առաջ, արդէն փոխադրել  
էին բանտից եւ վակել դատաստանատան ներքնա-  
յարկ, գետնափոր նկուղներում: Երբ ներկայ էր դա-  
տաւորների կազմը եւ մօտ սկսելու ժամը, նրանց բե-  
րին դահլիճը, տեղաւորեցին դատւողների յատուկ  
բաժնում եւ շրջապատեցին պահակներով . . .

Դահլիճի ճակատ պատի վրայ, ոսկեգոյն շրջանակի  
մէջ, կտխւած էր տէրունական խորհրդանշանը, որի  
աչքերի առաջ, ոտների տակ դրւած ամբիոնի վրայ,  
կիսալուսնաձեւ և կանաչածածկ սեղանի շուրջը բազ-

մել էր դատաստանական կազմը: Մէջտեղումը նստել էր նախագահը, յիսուն տարի քալած, ալեխառն միրուքով, բարի արտաքին երեսյթով մի ծերունի՝ կրօնաւորի տարագով: Երա գլխարկի չուրջ բոլորած սպիտակ փաթթոցի փայլը աւելի էր լուսաւորում ճակատն ու գէմքը և սպիտակացնում ալեգարդուած հերերը: Նախագահի կողքերին, աջ ու ձախ, տեղ էին ըռնել ազգերի և դասային նորկայացուցիչները: աջակողմի վերջին աթոռը զրաւուի էր դատախազը, նրա դիմացում, միւս կողքի վերջին տեղը տրւած էր աւագ քարտուղարին: Դատախազի արտաքինը անզամ արգիլում էր նայողին՝ դէպի նա, զգուանիքի ու ատելութեան զգացումներից բացի, մի այլ մտածում ունենալ:

Նախագահը գատը սկսւած յայտարարեց:

Բազմամարդ դահլիճը որ ազմկած էր ցարդ, լոեց այնպէս, ինչպէս սև զիշերների մէջ գերեզմանատներն են լուսւմ:

Քարտուղարը սկսեց ընթերցումը մեղագրեալների վերաբերեալ ամբողջ գործի, որի մէջ առաջ էին բերւած նախնական քննութեան ժամանակ, քննիչների կողմից կազմւած բոլոր արտառոց յերիւրանքները: Այս վերջանալուց յիտոյ, կարդացին մեղագրեալների անունները, որոնք տասնեակներով էին:

Նախագահը գիմելով մեղագրեալներին հարցնում է, — բոլորը ներկայ են: Հնչակեան ներկայացուցիչ Փարամազը, ո՞վ է, թող առաջ անցնի:

Այս ժամանակ հասարակութեան մէջ տիրեց մի իրարանցում, որովհետեւ ամէնքն էլ ցանկանում էին անպատճառ տեսնել հոչակաւոր ներկայացուցչին:

Երիտասարդը առաջացաւ և ասեց — ահա՞ ես :

— Ո՞վ էք դուք, որտեղացի, ի՞նչպէս է ձեր անուն  
ազգանունը, հարցրեց քաղցրութեամբ նախազահը:

— Ես դժբաղտաբար ո՛չ մի բան չեմ կարող ասել.  
Պ. նախազահ, որովհետեւ ո՛չ մի երաշխիք չունիմ ան-  
ձիս անձեռնմխելիութեան, մինչեւ անդամ դատավա-  
րութեան ընթացքում, ուստի ես առաջարկում եմ  
կոնչել այլ տէրութեանց ներ՝ յացուցիչներին ներ-  
կայ լինելու համար, հակառակ դէպքում ես հրաժար-  
ուում եմ ձեր բոլոր հարցերին պատասխանելուց:

Նախազահը այնունետեւ հերթով հարցրեց ներկա-  
յացուցչի բոլոր ընկերներին, որոնք դարձեալ միևնույն  
կերպով պատասխանեցին : Ապա նա դատաւորներին  
խորհրդակցութեան հրաւ իրեց:

Անցկացաւ կէս ժամ, որից յետոյ նախազահը մտաւ  
դահլիճ և յայտարարեց թէ նիստը յեաաձգւում է :

Այսպէս ամիսներ տեւեց դատավարութիւնը:

Վերջապէս եկաւ հասաւ վերջնական գործողու-  
թիւնը :

Դատավարութեան ներկայ էին այլ պետութեանց  
ներկայացուցիչներն և ահապին բազմութիւն այլազան  
ժողովրդներից : Ընդունւած պաշտօնական արարողու-  
թիւնները վերջանաւուց յետոյ, դատախազը սկսեց  
կարգալ իր մեղադրականը :

«Երդարագատութեան եմ յանձնում Հնչակեան  
ներկայացուցիչ Փարամազին, խմբապետներ՝ Մելքո-  
նին, Վարդանին, Արշակին և իրենց հետեւորդ այս  
բազմաթիւ ընկերներին, որոնք զինւած խմբով օտար  
երկիրների սահմաններից գաղտնի մեր երկիրը մտտն,  
կռւի, բռնւեցին Բ.ի շրջանի Խ... գիւղի մօտ, Քրդերի  
եւ մեր կառավարութեան զինւորների հետ, միօրեայ  
չակատամարտից յետոյ նրանք յաջողեցան խուսափիլ

և քաղաք մտնել, ուր ինչպէս յայտնի է շնորհիւ կառավարութեան եռանդուն ջանքերի վերջապէս ձերբակարւեցին: Նախնական քննութիւնների և բազմաթիւ վկայութիւնների վրայ հիմնելով ապացուցւեց, որ նրանք անգամներ են Հնչակեան յանցաւոր և դադանի ընկերութեան, որը նպատակ ունի, ամենից առաջ, անջատել Հայաստանը թիւրքական կայսրութիւնից և հիմնել Հայոց թագաւորութիւն: Երկրորդ՝ իրենց ծրագրով պահանջում են ջնջել բոլոր աստւածադիր կարգերը, օրէնքները, որոնցմով մինչև այսօր կառավարում են աշխարհը ու մեր հայրախնամ կայսեր երկիրն ու հպատակները, և նրանց տեղ դնել հաւասարութեան, աղատութեան ևայլն կարգերը, որ ժամանակ կնոջ և տղամարդու խարութիւններն, տէր ու ծառան, զինորն ու փաշան բոլորը պիտի վերանան և իրեւ թէ ամէնքը հաւասար պիտի լինին: Այս յանցաւոր և աշխարհակործան, հակակրօն և անաստած նպատակները իրագործելու համար, նրանք ընտրել են նոյնպէս ամենադատապարտելի միջոցներ: Զինւած խմբեր կազմակերպելով դուրս են եկել լեռները, կողոպտում և թալանում են բարի և աստւածատպաշտ մարդկանց, սպաննում են մեծ թագաւորի պաշտօնեաններին, աւերում, հրդեհում և խռովում են մեր խաղաղ երկիրը: Այս ամէնը արդէն ապացուցւած իրողութիւններ են, ուստի պահանջում եմ, պարոնայք դտաւորներ, յանուն արդարադատութեան և օրինադրքի, նրանց, որպէս պետական դաւաճանների, նորին կայսերական մեծութեան դէմ ըմբուստացողների, որպէս ոճրագործների և աւաղակների, դատել և պատժել համաձայն պատժական օրինադրքի 45, 56, 58 և 62րդ յօդւածների տրամադրութեանց...»:

Դատախտը վերջացրեց, հանդիսատես հասարակու-

թեան միջից լուռում էին հայհոյախառն կանչուտութեան և ներ՝ «Մա՞ն անաստուածներին», «կախազանով խեղդամահ անել այդ չարագործ ապստամբներին»;

Դարերի մոլեուանգութեան, խաւարամտութեան ձայնն էր այս, որ զիլ հնչում էր վայրենի հասկացողութիւններով սնւած ու զարգացած ժողովրդի բերնով։ — Այժմ հելթը ձերն է Պ. Պ. մեղադրեալներ։ Խօսէք ու պաշտպանեցէք ձեզ. երբէ մի թաքցրէք ճշմարտութիւնը, համարձակութեամբ խոստովանէք և հաւատացէք, յուսացէք արդարագատութեանը։ Առաջինը նա հրաւիրեց ատեան ներկայացուցչին։

Ոտքի ելաւ Փարամազը, մի երկու քայլ առաջ զնաց հպարտ հանդիսաւորութեամբ, հրաբորբոք աչքերով չորս բոլորը նայեց, ապա հայեացքը ուեհոց ուղիղ նախագահին, մինչ ուսերն իջնող զանգուր մազերը նեռացրեց ճակատից և քունքերից, սրբեց քըրտինքը, ապա համարձակ և հնչիւն ձայնով սկսեց։

— «Պարսնա՛յք գատաւորներ, համոզւած լինելով որ մեր գաւանած սկզբունքները ձգտում են մարդկութեան կատարեալ երջանկութիւն հաստատելու և ապահովնելու, զիտակցելով մեր գաղափամների և գործի անվիճելի վեհութեանը, իս միանգամայն երբէք կարիք չեմ զգում մեզ պաշտպանելու և կամ այսպէս անւանւած արդարացնելու, որովհետեւ թէ առաջիւ և թէ մանաւանդ երկրորդը ոչ մի նշանակութիւն չունին մեզ համար; Ես իմ նառով պիտի պատասխանեմ միայն Պ. գատախազին և նրա մեր կուսակցութեան հասցէին արած զգւելի զրպարտութիւններին։ Արդարագատութիւնը արդէն զոյլութիւն չունի, որովհետեւ ա՛յն ինչ որ ճշմարիտ է մարդկային, նա ձեր օրինագրքով նկատւած է ծանր յանցանք։ Գոյյութիւն ունի և մի այլ նշանաւոր հանգամանք, ներկայումս նոյ-

նիսկ դործածութիւնից հանւած է և այդ օրինագիրք կոչ ածր, նրա պատիժները շատ մեղմ են նկատւած, թագաւորում է բռնապետ, անսիրտ աշխապետուների բացարձակ կամքը, այնպէս որ ես հաւատացած եմ, որ մեր վճրագիրները արդէն տրւած են ձեզ և այժմ նբանք դրւած են այդ սեղանի վրայ, հետեւաբար դուք ոչինչ անել չէք կուրով, բացի հասարակ մարդխարուկ ձեւական խաղից :

«Եյն դժբաղդ օրից, երբ որ մեր երկրագնդի վրայ սկիզբն առին, ներկայումս իրենց ձայրայեղութեան և ամենաբիրտ սաստկութեան հասած իրաւակարգերն ու հասկացողութիւնները, որոնք ստեղծեցին բռնադատորէն, հաստատեցին տիրելու, հպատակիցնելու, զրկելու և առանց աշխատանքի ուտել վայելելու դրութիւնը, որոնք, բնատուր բոլոր բարիքների հետ և մարդկութեան ամենաաճնշող մեծամասնութեանը ստիպեցին զինու բիրտ և անազնիւ ուժով, միայն և լոկ իրենց սին փառքին, անբարոյական հածոյքներին ծառայել։ Երանք իրը թէ ազնիւն ու վեհը պաշտել տայու, մարդկանց բարոյացնելու և ճզճիմութիւնից բարձրացնելու պատրւակով, վարդապետութիւններ անգամ յօրինեցին, յարմարեցրին եւ իրենց ցանկութեան զէնք, միջոց դարձրին ստոր գիտումները իրագործելու համար, մի խօսքով՝ նրանց համար զոյսւթիւն ունի մարդկային ազգի մեծամասնութիւնը իրբեւ լոկ միջոց, աստիճան կամ պատւանդան յզիանալու և տիրելու համար։ Ահա այսպէս եղաւ որ երկիրը գարձաւ դժոխք, արեան ծով, թշւոռութեան հովիտ... որպէս զիտէրերը թագակիրները և իրենց արբանեակները զւարձ օնան ի հաշիւ այլոց, անհամար աշխատաւորների, միլիոնաւոր Բանւորների...։ Եւ այն դժբաղդ օրից, երբ այս կարգերի հիմը դրւեց, սկսւեց միաժամանակ մի

խուր, յարատեւ և յամառ կոխւ տէրերի և հպատակների միջեւ։ Դարեր եկան ու անցան։ Պատերազմներ եղան մէկը միս սից անեղ։ Մարդկային արիւնը գետերի նման հոսեց։ Տ անջւող մարդկութեան անպատմելի գալարումները ստիպեցին և պատճառ գարձան, որ մարդկային գլուխը, միտքը ճար գտնէ, ճամբայ ցոյց տայ և վախճան գնէ այս աշխարհաւեր և մարդակոտոր չարեաց։ միջոցները սեպհականութիւն գառնալով աշխատաւոր

Եւ եղան մարդիկ, որոնք խորհեցին, մտածեցին և տարիներով յօդնեցին երկար, մինչեւ որ մեր օրերում գտան միջոցը, ճամբան, միակը, գիտն սկան և թարանական ճշ բարտութիւնների վրայ ձեւած մի վարդապետութիւն, որ կոչւում է Սօգիալիզմ-Ընկերվարութիւն։ Ի՞նչ է ասում այդ գիտութիւնը։ Նա յոյտարարում է, որ մարդկային թշւառութեան, պատեր սզմների և անհաւասարութեանց մի սկ և հիմն սկան պատճառը տընտեսական պայմաններն են, պայմաններ՝ որոնք ըստեղծել են շահերով և հետեւաբար ըմբռնումներով իրար հակառակ դասակարգեր, և որպէս գարման այս չարեաց, նա գալիս է իր հրամայականը գնելու։ Եւ ահա՛, — պիտի կործանւին դասակարգերը, դա պատճական անհրաժեշտութիւն է։ Եւ արդիւնաբերութեան դասակարգին, առաջ կը գայ բնաանհրաժեշտօրէն հաւասար աշխատանք, հաւասար վայելք, որով և կը թագաւորէ «Մէկը ամէնքի, ամէնքը մէկի» սկզբունքը։

Ահա՛ այս է և Հնչակեան Պուսակցութեան սկզբունքը, նրա միակ և վերջնական նպատակը։

Այս միջավայրի և ժամանակի մէջ Հնչակեան Պուսակցութեան ծնունդը բնական էր և հրամայական, և նա հրապարակ ելաւ գործելու։ Ի՞նչ էին ներկայացնում գործունէութեան համար ընտրած ասպարէզը և իրեն ծնունդ տւող ժողովուրդը իրենք իրենցից։

Ամբողջ երկիրը տնքում էր ամենաարասվելի բանագետութեան ձիրաններում, ահատեսականը՝ ցեղերին ու ազգերին դարձրել էր գերի և իրար յօշոտող, տիրապետողների ձեռամբ: Առոր կորիքը աշխարհով մէկ ազաղակում էր: Կրօնը՝ շահագործողների գլխաւոր զէնքերից մէկը, իր ախուր գերը շատ յաջողութեամբ էր կատարում: Տիրապետող-կառավարողների ազգային պաշտօնական կրօնը չէին զաւ անում հպատակուած ժողովուրդները, և նրանք, շնորհիւ այս հանդամանքի էլ ենթակայ էին բացի զաստկարդային զրկանքներից, կոտորածների ու հայտանքների իոնենց զասակից արազգակից, բայց տիր սպետողները՝ կրօն զաւ անող, աւգիտակից խարւածների կողմից էր:

Եւ իբրև ազգ ու այլակրօն տարր հայութիւնը ող ժողովուրդներից մէկն էլ հայութիւնն է, որից ծնունդ առեց մեր կուսակցութիւնը:

Դարեր շարունակ նաև հայութիւնը տանջի եց ու չարչարւեց, անտանելի բեոր շայտեն տուած՝ անհուն զրկանքներով այս օրերին հասաւ: Երբ զրութիւնը աւելի վատթարացաւ, ճնշումները սաստկացան և գերազանցելով պատմականները, բոլոր անցեալը մոռացնել տւին, այս հետեւանք եզաւ, որ նա զարթնէ և զգայ տասնեւիններուրդ զարու քանագետների էն չտիպիկ ներկայացուցիչ Մեծ-Մարդասպան Արգիւր-Հասիտի լծի ծանրութիւնը և բնողգումի զաղափարը ծնէ:

Իր սահմաններից դուրս, իր զասակիցներից, պարագրաւած՝ թաղակիրը կատազի գագան կտրեց ներսինների: իւրայինների հանգէտ: Ուարի ելան զարերով քնածները, ազատութեան զոռ փողի ձայնը յայնատարած երկրեմէկ ծայրից, միւսը լսելի եզաւ, ճնշւած շատ ժողովուրդները թօթափեցին լուծը, իշրեցին չղթաները և ազատ չունչ առին:

Ոտքի ելաւ և Հնչակեան Ազուսակցութիւնը յանձին հայ ժողովրդի և վճռեց կամ ապրել և պահել իր ազգային պատմա-անհատականութիւնը և կամ թէ մեռնիլ պատւաւոր կերպով, իրաւունքները պաշտպանելու հակատամարտում։

Մեզ մեղադրում էք անջատողականութեան, Հայստանը բաժնելու և այնտեղ Հայկական թագաւորութիւն հիմնելու մէջ։

Մենք չենք անջատողը, մենք չենք բաժանողը, այլ դուք, պարոնա՛յք դատաւորներ, դուք և ձեր կառավարութիւնը։ Ամբողջ երկիրը ի շահ ձեզ զարձը-րել էք ընդարձակ շահագործարան, միլիոնուոր ձեզ նման մարդկանց ձեզ ստրուկներ անուժ էք, բռնադատում էք, որ լուն, խեղդում էք բողոքի աննշան ձայնն անգամ, ձանելի ո՛չի՞նչ կայ այս երկում, ազգերի գոյութեանը վտանգ է սպառնում։ Դուք ծրագրել էք և եռանգով էլ զործագրում էք այդ ազգերի ջնջումը։ Թոյլ չեք տալիս որ ապրին ազգերն ու ժողովուրդները, և ապա՛ վեր էք ելնում և մեղադրում որ բաժանւում են, անջատողականներ են։ Ստեղծէ՛ք երկում փոքր ինչ տանելի կարգեր, թոյլ տուէք ազատ զարգանալու, և ո՛չ ոք չի մտածիլ բաժնւիլ։ Իսկ դուք ի՞նչ արիք։ — Դէմ կեցաք ձեր բոլոր ուժով Միտհատեան սահմանադրութեանն անգամ։ Սուլթան Համիզը թաղեց ո՛չ միայն Միտհատն և իր սահմանադրութիւնը, այլ այսպէս մտածողներին, կասկածեւլիներին հարիւրներով ու հազարներով կերակուր դարձրեց Միջերկրական, Սև և Մարմարա ծովերի ձկներին։ Գնացէ՛ք հարցրէք մայրաքաղաքի բնակիչներին, որոնք դադարեցին ձուկ ուտելուց, որովհետեւ նրանք լիշահոտել էին։ Երջէք երկրի բոլոր անկիւնները և կը գտնէք անշուք դերեզմանները Թիւրք ազատամիտնե-

րի՝ ձեզնից հալածւած, ձեր ձեռքով միւս աշխարհ  
ուղարկւած; Եւ ահա այս պատճառներն էին որ բաժանե  
բաժան գարձրին թիւրքիան, ու իրականացաւ ներկայ  
արիւնուշտ գահակալի դժբախտ հօր գուշակութիւնը,  
որն ինձ պատմել են բանտում թիւրք հայրենակիցներս.  
«Երդիւլ Համիդի ծննդեան ժամանակ, հայրը բազնի-  
քում լողանալիս, պալատական բանքերները աւելում  
են նրա թագունու երկունքից ազատւիլը, — Մա՞նչ է  
նորածինը, հարցնում է մերկամարմին Սուլթանը—  
«ա՛յո» պատասխանում են; Վա՛յ, տրտմազին հառաջում  
է նաև ձեռները ծնկներին զարնում, խեղած ժողովուրդ,  
ափսօ՞ս իշերկրին, ևս մերկ, նորածինը՝ ապագայ կայս-  
րացուն մերկ, այս լաւ զուգաղիպութիւն, լաւ նշան  
չէ» — և ճիշտ լաւ նշան չեր զագունի աշխարհ գալը +  
մանաւանդ թագաւոր դառնալը: Ծու րջերնիդ նայէք և  
տեսէք աւերը, ջարդուփշուր եղած և Եւրոպական  
դրսանակերպի գոնձարան զարձած թուրքիան, նրա  
ժողովուրդների տղբատութիւնն և քաղցածութիւնը:

Աւերջին խօսքերը ելեքտրականացրին ամենքին էլ:  
Դատախազը տեղում շարժւում է ինչպէս վահրի վրայ  
նուտած մէկը, ժողովրդի միջից ձայներ բարձրացան,  
ուանք կանչում են «Ճի՛շտ է, ճիշտ է ասում», ոմանք,  
«լոեցրէ՛ք գեաւուրին, հայհոյում է»:

— Պարոն նախագա՞հ, պահանջում եմ լոեցնել, ո-  
րովհետեւ նա յանգնում է հայհոյել մեր աստվածաշուք  
կայսեր, ևս թոյլ չեմ տալ և չեմ կարող հանդուրժել,  
յուզւած և փրփրած կերպով ասաց դատախազը:

Մեղադրւողը թաթար էր առել, նա քրտնել ու կար-  
մըել էր, այնպէս էր ոգեւորւած որ իրեն զգում էր  
ազատ քարոզչական ամբիոնի վրայ: Եւ վերսկսեց նաև

— Ես չեմ հայհոյում, այլ ասում եմ զուտ ճշմար-  
տութիւն, եւ ձեզ ծանր է դալիս, դուք չէք կարողա-

Նուժ՝ լսել : Ահա՝ այսպէս, պարոնա՛յք գտառաւորներ, երկիրը բաժան բաժան անողները, անջատականները մենք չենք, այլ զո՞ւք, տիրապետողներիդ կառավարութիւնը :

Մեզ մեղադրում էք, որ նպատակ ունինք հայկական թագաւորութիւնը վիրականգնելու; Աա՛ սո՛ւ է, քաշարձակ և անխիղճ զրապարտութիւն է : Մենք Հայաստան, ինքնավար Հայաստան ենք ուզում այստեղ բնակւող ժողովուրդների համար, ուր չեն տիրապետելու բանապետական կարգեր, ուր ազգ ազգի և ցեղ ցեղի զրայ չեն տիրելու, ուր բացի ժողովրդական կամքից, զոյութիւն չի ունենալ և ո՞չ մի թագաւոր, մենք չենք ցոնկանում մեկ տիրողին տապալի և նրա տեղ մի այլ գնել : Իշխողների անունները փոխանուն ոչինչ չի լինի, մեզ համար միեւնոյնն է Սույթան Համբին էլ Թագէոս արքան էլ, ուրիմն այն բանում, ինչում որ մեզէք յանցաւործանաչում, կատարեալ վատահութեամբ ձեզ պիտի մեղադրել, որովհետեւ զուք էք պահպանողը բոնակալների և նրանց գարշապարները լիզողը :

Մեզ դատապարտում էք որպէս անաստածների և անկրօնների, բայց ո՞րն է ձեր Աստւածը, ի՞նչ է ձեր կրօնը : Դարեր առաջ ապրող մարդկութեան համար պահանջ էք, անհրաժեշտութիւն էր կրօն ունենալ, Աստւած ունենալ, և եթէ չլինէր Աստւած, ինչպէս առում է մի յայտնի փիլիսոփայ՝ «մարդկի պիտի ստեղծէրն նրան» Այն, ինչ որ մի ժամանակ պէտք էր, ներկայումս անպէտք է՝ այզպէս է և կրօնը : Նա՛ ներկայ մարդկութեան համար ո՞չ միտյն պէտք ական չէ, այլև վեառակար է, որովհետեւ նա դարձել է ամենաառաջեղ մի ազգակ տիրապետողների համար, նա քարոզում է ատելութիւն և աններողամտութիւն տարբեր դաւանութիւն ունեցող մարդկանց հանդէպ, նա

օրհնում է մարդակոտոր սուրը, սրբագործում է մարդապան օրէնքները: Մենք պահանջում ենք իղձի կատարեալ ազատութիւն, և որի համար էլ առաջադրում ենք եկեղեցին բաժնել պետութիւնից, որպէսզի այս վերջինը չբռնանայ մարդկանց հաւատալիքների վրայ, չհարկագրէ նրան տուրք տալ ու յարգել այն բանը, որը չի դաւանում, չի հաւատում: Այժմ ասացէ՛ք, ո՞վ է ձեր Աստւածը, ո՞րն է ձեր կրօնը: Ձեր Աստւածը զէնքն է և կրօնը ձեր ստամոքսը, և մենք, հպարտութեամբ կասենք, պիտի տապալենք այդ Աստւու ծո պիտի ջնջենք այդ կրօնը, զա' հրամայական է, զա' մարդկային է:

Այս խօսքերը ասելիս հանդիսատես հասարակութեան միջից իրարանցման աղմուկ բարձրացաւ, շողալ սկսեց դաշոյնի կեռ և փայլուն սուրը, որի կրողը գոռում էր կատաղօրէն—ճամբա՛յ տւէ՛ք, ճամբա՛, պիտի սրախողիսող անել այդ անսատւածին: Զօրքերն ու ոստիկանները տեղներիցը դանդաղութեամբ էին շարժւում, և քիչ էր մնում որ մարդասպանը մեղադրեալին մօտենար, երբ օտար տէրութեանց ներկայացուցիչների հետեւորդ պահապանները մէջ մտան և շրջապատեցին նրան: Կաշառւած չարամիտին հեռացրին գանլիճից: յուզումը դադարելուց յետոյ, պաշտպանողականը շարունակւեց.

—Ասում էք որ մենք գէմ ենք սեպհականատիրութեան պատասխանեմ ու պարզեմ մեր տեսակէտը, որն ձեր կողմից ամենասանսերը մէջ մտան և շրջապատեցին նրան: Կաշառւած չարամիտին հեռացրին գանլիճից: յուզումը դադարելուց յետոյ, պաշտպանողականը շարունակւեց:

դարդի չարաչար աշխատութեան, բայց ասացէ՛ք, այս  
միլիոնաւոր զործաւորներից քանի՞ն են տէրը իրենց  
արտագրածի, նրա քանի՞ներըորդ մասն են ստանում;  
Պատասխանը այս հարցի մէկ է և բաց սրձակապէս  
պարզ, — ո՞չ մէկը տէր է իր քրտնաթօր վաստակի,  
այլ նրան տալիս են այնքան, որ չմեռնի, որ ֆիզի-  
քական գոյութիւնը պահպանի էլի աշխատելու, էլի  
հարստութիւն արտագրելու համար: Ո՞ւր է գնում  
սրանց ստեղծած հարստութիւնը, ո՞վ քեր են յափշտո-  
կում ու խլում սրանց սեպհականութիւնը: — Իո՞ւք  
և աշխարհի ամէն կողմերում տարածւած ձեր գասա-  
կիցները, ձեր կառավարութիւնները: Մարդկութեան  
ամենաչնչին տոկոս կազմող շահագործողների անյա-  
տակ գրգաններն են կլանում միլիոնաւորների ար-  
տագրած հարստութիւնները, նրանք են որ առանց  
աշխատանքի, առանց յօդնութեան և քրտինքի տէր  
են զառնում շքեղաշէն պայտաների, լայնատարած  
կարածների, զործարանների, երկաթուղինների, չո-  
ղենաւերի ևն ևն, և որ աւելի վատթարն է և ա-  
մենատարափելին, գա՛, իրենց վայելք պատրաստող  
միլիոնաւոր մարդկանց կատարեալ ստրկացնելն է,  
սեպհականացնելն է: Ասացէ՛ք, ո՞վ է սեպհականաց-  
նում գիւղացու աշխատանքի արդիւնքը, մե՞նք թէ  
դուք, ո՞վ է յաւիտենական սովի և կարիքի ուրւա-  
կաններով տանջում ժողովուրդը, մե՞նք թէ ձեր կա-  
ռավարութիւնը: Մենք չենք ցանկանում, որ առանց  
աշխատանքի վայելք լինի, մենք չենք կարող տանիլ,  
որ միլիոնաւորներ աշխատին, անտուն անտեղ մեան,  
սովամահ մեռնին, իսկ չաշխատողները ուտեն ու պա-  
րարտանան: Մենք աշխատում ենք՝ կործանել սեպհա-  
կանատիրութեան այս աւազակային գրութիւնը, տի-  
բապետողների անարդարութեանց վերջ տալ և շահա-

գործողների ստեղծած անհաւասարութիւններին՝  
վախճան։ Պիտի վերանայ, որ՝ պատմութեան հրա-  
մայականն է, որ ո՞չ մի բանի առաջ կանգ առնել  
չդիտէ, ներկայ հասկացողութեամբ գոյութիւն ունե-  
ցող մասնաւոր սեպհականութիւնը, այսինքն՝ օրինա-  
կանացած ամենաստոր ձեւի կողոպուտը, և նրա տեղը  
պիտի գրաւէ աշխատանքի սուրբ թագաւորութիւնը,  
հաւասար ուժխատանք և հաւասար վայելք։ Ահա՝ այս  
էական խնդիրը վճռելու, մարդանւէր իդէան իրազոր-  
ծելու համար է որ մենք ձեռք ենք մեկնում աշխար-  
հում եղած մեր բոլոր բազգակից ընկերներին և առում,  
«Բոլո՛ր երկրների ընչազուրկներ միացէ՛ք»։

Մեղ մեղազրում էք, որ ծրագրած ենք ընտանիքը  
և նրա սովորութիւններն ու օրէնքները տապալելու,  
Ահա զարձեալ մի մեղազրանք որ ո՞չ մի հիմք չունի,  
ահա՝ և մի աւելորդ ամբաստանութիւն։ Բայց ասա-  
ցէ՛ք, խնդրեմ, զոյութիւն չունեցող մի կազմ ի՞նչպէս  
կարելի է քանդել, ի՞նչու կռւել նրա դէմ։ Ներկա-  
յումս, տիրապետող այս իրաւակարգի մէջ, անտեսա-  
կան այս պայմանների ներքոյ կա՞յ ընտանիք, մնա-  
ցե՞լ է ընտանեկան կազմակերպութիւնը։ Ո՞չ չկայ  
նա, նրան ոչնչացրիք իր հիմքից, և այժմ ընտանիք  
անւան տակ երեւան է հանւած ստրկական, իրաւա-  
զուրկ մի հաւաքածոյ, ենթակայ վերից եկած օրէնք-  
ների, անպաշտպան՝ ամէն կողմից իրեն վրայ թափ-  
ւող հարւածների առաջ։ Ո՞ւր է ընտանիքը, երբ  
մարդկութեան ուղիղ կէսը՝ մարդ մայրը, այդ կազմի  
մի անդամը, իրաւազուրկ է, ստրուկ է, և բացի աըն-  
տեսական բռնութիւնից, ենթակայ է և այր մարդու  
իշխանութեան։ Այժմ ասացէ՛ք, ո՞վ քանդեց ընտա-  
նիքը։ Զեր օրէնքները, ձեզնից հովանաւորած և  
պաշտպանւած արտօնեալ դասակարգերն են, որ ստեղ-

ծեցին մարդավաճառի, մարմնավաճառի հակամարդկութին զրութիւնը, բիւրաւոր կանանց փողոց շպրտեցիք, հասարակաց անբարոյացման տներ կառուցիք և, վերջապէս, մինչեւ այսօր էլ, զեռ վաղն էլ կաշիատէք յաւրտենական գարձնել կին մարդու ստրկութիւնը, որպէսզի նրա՛ն զործածէք միմիայն ձեր գաղանական հաճոյքների համար, Միչզեր մենք, մեր պաշտպանած սկզբունքներով, ու զում ենք բառնալ այս չարիքը, պահանջում ենք իրաւունքնարի և պարտականութեանց հաւասարացում, որով մի միայն հնար պիտի լինի վերակազմել ընտանիքը, իսկական սիրոյն հաւասարութեան վրայ կառուցւած:

Եւ մենք վճռեցինք, մեր կեանքերի գնովը, զէնքի ուժով հարկադրել ու ստիպել այս սարսափների հեղինակներին, որ խոնտրհւին մարդկութեան գերազոյն շահերի առաջ; Մեզ ստիպեցիք զէնք վերցնել և զործածել հակառակ մեր յանկութեան, որովհետեւ դուք ստանել չկարողացաք մեր խօսքն ու քարոզք, գուք սարսափում էք խաղաղ աշխատանքից անդառ, ձեր անարդ գոյութեան հիմքն ու խարիսխը կոպիտ և բռնի ոյժն է միմիայն; Մենք զինաթափ կլինինք հէնց այն բռպէին. երբ դուք մեր ձայները չէք խեղդիլ թնդանօթների որոտումներով: Մենք զինւեցինք ինքնապաշտպանութեան համար, մարդասպաների զէմ կրուելու ելանք համապատասխան գործիքներով, և հերոսական ջանքերով զիմագրաւում ենք, պատնէշ ենք կանգնեցնում մեր մարմիններով կոտորածներ և ժողովրդասպան ոճիրներ կազմակերպողների զէմ; Մեր զէնքերը երբեք չեն դաւաճանիլ, նրանք չեն բարձրացել և չպիտի բարձրանան այսուհետեւ էլ անմեզ մարդկանց վրայ:

Մեզ անւանում էք ոճրազործ, կողոպտիչ, խոռվա-

բար են, են, Պատասխանում եմ:

— Մինք ոճրագործներ չենք, չենք եզել և չպիտի լինինք. ոճրագործը ձեր կառավարութիւնն է իր անառաջար անդիտակից հետեւորդներով: Գործը հրապարակի վրայ է, աշխարհի առաջ, ինքնին պերճախօս և անկարօտ ապացոյցի: Հարիւր հազարաւոր՝ գեռ երէկ ջարգւածների արեան գոլորշին, տակաւին դէպի երկնակարանն է բարձրանում, և արեամբ ոռոգւած Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր-Հայքի յայնատարած դաշտերը տակաւին չեն ցամաքել: Մի ընդարձակ երկիր իր լեռներով ու ձորերով, գետերով ու լճերով վարդագոյն է հագել: Դուքսնայէք մի անգամ հէնց այս դահլիճի պատուհաններից, և կը տեսնէք կոտորածի և հրդեհի վկանները, — մի տարի առաջ կոտորածի և հրդեհի մատնւած քաղաքի, գեռ ծխացող և սեւ ներկւած շինութեանց մրոտած պատերը:

Ո՞վ է տիրանում աշխատաւորների չարքաչ գործու, նէութեան արդիւնքին, ո՞վ է խլում նրա օրապահիկը — այլակերների, ձրիակերների կառավարութիւնը անշուշնու, և ո՞չ մենք: Ավքե՞ր են կազմակերպում պաշտօնական գողութիւններն ու յափշտակութիւնները՝ տուրք, մաքս, տասանորդ են, են: Ո՞վ է պաշտպանում և քաջալերում աւազակներին ու կողոպտիչներին և նրանց աւարը եղրօր պէս հաւասար բաժին անում: — դո՞ւք, ձեր կառավարութիւնը: Դուք կազմակերպեցիք ժողովուրդների հրապարակային անամօթ աւարաոր և մե՛զ էք մեղագրում:

Ասում էք, որ մենք խռովարաբներ ենք և վրդուվում ենք ձեր երկիրի անդորրութիւնը, և այս ասում էք այն ժամանակ, երբ երկիրը մատնւած է անծայրածիր անիշխանութեան, երբ ազգերը իրար վրայ են արշաւում, երբ աշխատող գութանաւորի երգի տեղ՝

հրացաններ են ճարճատում, երբ հնձւորի Մանդաղի փոխարէն, որերը մարդկային կեանքի ոսկի հասկերն են քաղում. . . :

Մենք ոչ թէ խռովում ենք խաղաղութիւնը, այլ ձեր գործը. ձեզ արգելք են հանդիսանում, չէք թողանում որ հանգստութեամբ թաղէք ժողովուրդներն եիրենց տենչանքները:

Ես վերջացնելուց առաջ կրկնում եմ:

Դուք քանդում էք կրօնի տաճարները, սրբութեան խորաններն էք պղծում, գարերի սրբագործած աւանդութիւնները ոտնատակ տալիս, չէք ճանաչում ո՛չ մի Աստված, բացի ձեր քսակի, կրքերի և ստամոքսի աստծուց, և մե՛զ էք մեղագրում որպէս անաստածների:

Տիրանում էք ուրիշների աչխատութեան արդիւնքին, իւլում, յափշտակում էք այլոց սեպհականութիւնները, կաշտուում և անխիղճ կերպով հարստահարում էք և մեզ մեղագրում:

Սպանում և կոտորածներ էք սփռում և մեզ յանցաւոր ճանաչում:

Անբարոյականութիւնն էք թագաւորեցնում, կնավաճառը օրինականացնում, այր մարդու գերիշխանութիւնը կնոջ վրայ յաւիտենականացնել էք աչխատում, և ապա մեզ ասում որ «ընտանիքը քանդում էք»:

Ես վերջացնում եմ:

Այս բոլորից յետոյ, ինչ կամենում էք, կամ ինչ որ հրամայուած է ձեզ, արէ՛ք: Մենք դիտակցութեամբ ընտրել ենք պարտականութեան այս փշոտ բայց սիրելի ասպարէզը: Մենք համոզուած ենք մեր գործի և կոչումի վեհութեան, և ձեզ չի յաջողւի երբէ՛ք և ո՛չ մի գնով կասեցնել մեր ընթացքը, կանգնեցնել զիտութեան առաջընթաց անիւը: Մեր զաղափարները

անմեռ են, գերեզմանները արդանդ, մեր շարքերից  
ընկած իւրաքանչիւր մէկի փոխարէն՝ հազարներ կը  
կանգնեն, և այս հաստատուն հաւատով ես կոչում եմ  
հպարտութեամբ և ասում վերջին խօսքը. —

Անկցի՛ բոնապետութիւնը,

Կորչի՛ տնտեսական անհաւասարութիւնը,

Կորչի՛ մարդասպանութիւնը,

Կեցցէ՛ Սօցիալիզմը,

Կեցցէ՛ Հնչակեան Ազուսակցութիւնը :

Փարամազը սրբեց ճակատի քրտինքը, մօտեցաւ  
յանցապարտների նստարանին եւ նստեց :

Հասարակութիւնը ցնցւում էր, մարդիկ կրկին ի-  
րար ուսերի վրայ էին բարձրանում հերոսին տեսնե-  
լու, դիտելու համար;

Նախագահը չւարած, ինքնիրեն կորսնցած, զլիսա-  
հակ մտորում էր: Դատախազը ներքին ուժեղ կուից  
անհանգիստ աչքերով ուզում էր լափել Փարամազին:  
Դատաւորները ննջել էին իրենց թաւշապատ բազկա-  
թուների մէջ վլած;

Նախագահը վերցրեց անուանացուցակը կարդաց և  
ապա ասաց :

— Խմբապետ Մելքոնը թող ատեան դայ:

Քսան, քսաներկու զարուններ հազիւ տեսած,  
խարտեաշ սազերով, վառվառուն և ցոլուն աչքերով մի  
երիտասարդ, ինքնավստահ և յոխորտ առաջ անցնելով  
ասաց.

— Ես եմ խմբապետ Մելքոնը :

— Դու նոյնպէս մեղադրւում ես յանցաւոր ընկե-  
րակցութեան անդամակցելու և Փարամազին հերոսա-  
կախումբը առաջնորդելու մէջ, պաշտպանիր քեզ:

— Ես պաշտպանելու պէտք չունիմ, որովհետեւ ինձ  
երբեք և ո՛չ մի բանում մեղաւոր չեմ գտնում: Այո՛, ես

զինւոր եմ Հնչակեան Ասուսակցութեան և ընկեր Փարամաղին, աւելի ոչինչ ունիմ ասելիք. ի՞նչ ուզում էք, արէ՛ք :

Այս վերջին խօսքերը ասելուց յետոյ նա յետ եկաւ իր տեղը և առանց ուեէ անհանգստութեան նստեց:

Այնուհետեւ նախազահը դիմեց յաջորդաբար մնաց- եալ մեղադրեալներին և բոլոր ձեւական գործողու- թիւնները վերջացած համարելով, դասային և ազգա- յին ներկայացուցիչ ճանչցւած դատաւորներին հրաւի- րեց Խորհրդակցութեան :

Դատաստանական դահլիճում կրկին աղմուկ բարձ- րացաւ և, հետաքրիրների բազմութիւնը, ի տես ցայ- սօր չլսած՝ և չտեսած նման դատավարութեան, նոր գաղափարների քարոզման և մանաւանդ ազատ ու հա- մարձակ խօսքերի, մի քանի ժամանակ ընթացքում կա- տարելապէս փոխւել էր. նա՝ այժմ, փոխանակ արգահա- տանքի և ատելութեան, ափսոսում և ոգեւորւմ էր :

Խորհրդական սենետակում նոյնական տեղի էր ունե- նում տաք և աղմկալի խօսակցութիւն:

— Յանցաւարների կարդ դասւած այս մարդկանց ըերաններով խօսում է զիտութիւնը, անարատ ճշմար- տութիւնը, մարդկային բարօրութեան և երջանկու- թեան զերսպոյն գաղափարը; Այս մարդիկ արժանի են հիացման և պաշտամունքի և ո՛չ թէ պատժի. ասում էր ոգեւորուած և յուղւած նախագահը, բայց որովհետեւ Սուլթան Համբիղեան կառավարութիւնը, նրա օրինա- գիրքը պահանջում են դատել ու պատժել ամենախիստ կերպով. և ես եթէ յանդգնիմ հակառակը, այսինքն համաձայն արդարութեան շարժւիլ, ինձ պիտի պատժեն չարաչար կերպով, ես իմ համոզմունքներիս և ցան- կութեանս հակառակ պիտի ստորագրեմ այսօրուայ- տալիք վճիռը և այդ թերեւս լինի վերջինը :

Այս պէս անցկացաւ աւելի քան մէկ ժամ։

Վճռագիրները արդէն պատրաստ էին և դատաւորները առանց գժուարութեան շարժում էին գրիչները և ստորագրում։

Հերթը նախագահին էր, նա վերջինին ստորագրելիս բուռն զայրոյթով գրիչը կոտրեց սեղանին զարնելով և ասաց։

— Զարդիչուր եմ անում մահապատիժներ վաւերացնող այս գրիչը, Կախաղանների չւանները հիւսող այս պողպատի կտոր-ծայրը և մնաս բարեւ ասում այս դահձի պաշտօնին։

Դատաւորները և զարմանում էին և մինչեւ անգամ ծիծաղում նախագահի խենթ միաժառութեանը։

Վերջապէս դատաստանական կազմը վերադարձաւ դահձին, ամենքը իրենց տեղերը բռնեցին, հանգիստ կանները թաղւեցին խորին լոռութեան մէջ. շատերը սրտատրով սպասում էին։

Վճռագիրների ընթերցումը սկսւեց։

Ներկայացուցիչ Փարամազ և խմբապետ Մելքոն դատապարտում են մահւան պատժի, կախաղանի միջոցով երեանցի Արշակ, Պարսկաստանցի Վարդան Նազարբէզնան, Մշեցի Վարդան, Խլաթցի Ենգօ, Կարճկանցի Գիւրջի և Արճակեցի Գէորգ՝ տասնեւհինգական տարի չղթայակապ տաժանակեր աշխատանքի։

Մահասիրիւռ մի սարսուռ հով-քամի անցաւ բոլոր ներկաների վրայով։ Ընթերցման յաջորդեց մի պահ խորին լոռութիւն։

Կրկին ոտքի ելաւ Փարամազը և ասաց.

— Կախաղա՛ն և շղթա՞յ, մա՞հ և տաժանա՞նք։ արհամարհում ենք, արհամարհում ենք մեր բոլոր էութեամբ, մեր կարողութեամբ։ Զեր կախաղանների սիւները՝ ազատութեան աշտարակներն են, և նրանց

Հւաններից կախած ձռնուն մարմինները, յաւիտենա-  
կան նախատինք ներկայ կարգերի և նրանց հեղի-  
նակների համար:

Յեղափոխականի զերջին խօսքերի հաշիւնները  
խառնըւեցին շարժւել սկսող շղթաների ձայնին:  
Եւ նրանց կրկին բանտ տարան . . . :

1909 Յունիար

Բայու



# ՓԱՐԱՄԱԶ

(Սենսագրական համառօս ծանօթութիւն)



Գողթնեաց զաւասի Մեղրի գիւղից ։ Խոկական առնունն էր Մատթէոս Սարգիսեան։ Տաճկառտանում ապրում էր՝ Ռոտոսթրցի ՀԱՐԲԱՐՁՈՒՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ անունով։

Գրել ՓԱՐԱՄԱԶԻ կենսագրութիւնը՝ կը նշանակէ պատմել Հայ Յեղափոխութեան պատմութիւնը՝ ընդհանրապէս, Պօղիալ Պէմօկրատ Հնչակեան Պուսակցութեանը՝ մասնաւորապէս։

Մեր վերածնող կեանքի բոլոր ուրախ և տիտուր փուլերի մէջ՝ նա որոշեալ, վառաւոր բաժին ունի։

Զկայ Հայ Պայքարի շրջանի մէջ մի էջ, ուր՝ ՓԱՐԱՄԱԶԻ շունչը նրա եռանդը, խանդակարութիւնը, իրական գործակցութիւնը իր վճռական դել ը ունեցած չինի։

Բերլինի գաշնագրութեան 61րդ յօդւածը, ո՞չ միայն մնացել էր անիրազործելի, այլ և Պերմանական դիւանագիտոոթիւնը, զեռ 1882ին թիւրքիային ապահովել էր, որ նա մեռած տառ էլ կը մնայ։

Դուլցինիոյի խնդիրը այդ պայմանով էր կարգադրուած։

Մերունի կլադստոնը իր վերջին բողոքադիր—ծառնուց գագիրը տւած էր, ամեն ինչ մնացել էր առանց գրական արդիւնքի։

Սուլթան Համիտը իր հայաջինջ քաղաքականութիւնը սկզբնաւորել, սիստէմաթիք գործադրութեան մէջ էր դրել։

Հայաստանը, Հայ Ազգը, տառապանքի, խողիսողումի,

ք՞ն աջնդումի գործողութեան մէջ էին դրւել:

Մայր Հայրենիքի մէջ՝ հայ ժողովուրդի չարչարանքը, նրա բազմազիմի ցաւերը ծնել էին անկախ ոգիներ, պատասկ, բնութեան լծին չհամակերպող երիտառարգներ:

Սրանք խմբակներ կազմելով՝ լեռները, Յարձունքներն էին ամբաստանած և հայ ընդդիմագրաւկան, պայքարող, մարտական ողին կազմակերպած:

Հայ լեռները, ձորերը, գետերը, հայ երկինքը նոր կեանքի շեմքին էին կանգնած:

Կ. Պօլսոյ և ծովիզերեայ ա՛յլ քաղաքների մէջ, հայ երիտասարդութեան «գաւառացի» մասը սկսել էր մտմտուքի մէջ ընկնել. նա փնտում էր ուղին, շարժքւելու կամէութիւն էր ցոյց տալիս:

Այլ էր տեսարանը կովկասի մէջ: Այնտեղ ամեն ինչ հայկական էր, ամեն քայլափոխի Հայի անհուն տառապանքը արձանացած, կարկառուն ձեւեր էր առած. զուլումի աշխարհից զունդագունդ վախչողները կենդանի վկաներ էին. Նրանք պատմում, ձայնի այլիքներին էին տալիս իրենց ցաւը, իզձը: Նրանք մատնանշում էին ձեռքը, որ իրենց վրան էր բարձրացել և սպաննել աշխատում:

Կար այնտեղ կորովալից զարգացած երիտասարդութիւն, նա, տողորուած էր ժամանակակից գաղաւիարներով, գիտէր կեանքի արժէքը, հասկացել էր պարտականութեան չափը, սահմանը: Նա առողջ, անձնւէր էր, ժողովրդական խաւերից բղխած: Նա քաղաքական, տնտեսական, համեմատական ապահովութիւն էր վայելում, միջոց ունէր աւելի լայն չափերով պարապելու տաճկահայ տառապանքով, ա՛յն Դատով, որ իրենն էլ էր:

Կովկասը եթէ Մայր Հայրենիքից արհեստական

սահմաններով էր բաժանւած, բայց բարոյապէս, մտաւորապէս չէր դադարում միութիւն, ամբողջութիւն կազմելուց: Նա ապահով վայրի մէջ՝ հարազատ շարունակութիւնն էր շղթայի օղակների մէջ գալարող իր եղբայրների, արիւնակիցների:

Ու կովկասը, նրա խորհող, բանիմաց, զգայուն երիտասարդութիւնը մտաւ պատմական երկունիքի մէջ:

Ամեն ինչ ինքնարերաբար, ինքնարուղին էր, արդիւնք հայ յառաջադէմ կեանքի:

Զկար քաղաք, մանաւանդ և ճկաստանի սահմանների մօտ եղող,— Երեւան, Ազգ քսանդրապօլ, Ղարս, Սարի-Ղամիչ, Հին-Եասիիջևան, ևայլն,— որ իր տեղական խմբային կազմակերպութիւնը ունեցած չլիներ:

Վայոց ձորի (Թարալագեազ) լեռնական գիւղացիներն անգում խորակցութիւններ էին կազմած: Յուլորին էլ նպատակն էր Տաճկա-Հայաստանի ազատագրութեան սուրբ պատմական, նուիրական Գործը:

Ամեն ինչ խառն ի խուռն էր: Ազեւորութիւնը, եռանդը՝ բոլորի շուրջիշ ուժը:

Դա ժողովրդների զարթօնքի տարերային հոսանքը: առաջին շրջանն էր:

ՓԱՐԱՄԱՂԾ պատմական այդ ուխտի որդիւնքն էր:

Նրա գործօն, բնականից ըմբոստ ողին այլես իրեն հանդիսաւ չի տալիս:

Հակառակ իր ծնողների թախանձանքին, իր ուսուցիչների պնդումներին՝ նա թողնում է Ա. Էջմիածնույց Գէորգեան Ճեռարանի չորրորդ դասարանը, և մտնում է նոր հոսանքի մէջ:

1884-ի գարնանը՝ նա երեւում է Հին-Եասիին մէջ: Քաղաքի երիտասարդութիւնը՝ ծածուկ ժողովներ կազմելով, ազանութեամբ լսում էր նրա դասախոսութիւնները: Դասախոսը համակ բոց, կրակ էր:

նա բոլորի սիրտը իր հետ ունէր:

Այդ ժամանակ, ընկեր Սապահ-Գիւլիանը, զեռ հազիւ 21 տարեկան, Թիֆլիզի Ներսէսեան՝ Դպրանոցը աւարտած՝ Հին-Նախիջևանի հայ երկսեռ գպրոցների տեսչութիւնն էր վարում,

Երկու ընկերների առաջին ձանօթութիւնը այնտեղ է կատարւում:

Ընկեր Սապահ-Գիւլիանը Փարամազին ուղարկում է Հանուկ, ուսուցչութեան պաշտօնով, բայց հազիւ մէկ ամիս անցած, Փարամազը վերադառնում է և վճռաբար որոշում է Պարսկաստան անցնել՝ Տաճկաստան երթալու նպատակով:

Գալիս է 1887թ: Հնչակեան Առ սակցութեան հիմնադրութեան թւականը:

Առրաջատականը, ՓԱՐԱՄԱԶԻ մի ձեռքով պատրաստած, կազմակերպւած, առաջին անգամից, յեղափոխական ընդհանուր շղթայի մի օղակը եղաւ: Դա արդիւնք է Փ բամազի ջանքերի: Հնչակեան Առ սակցութեան հիմնաքարը, այդ շրջանի մէջ, նա էր գրել:

Փարամազի մի ոտքը կովկաս է, միւսը՝ Պարսկաստան:

Նրա այդ ժամանակւայ գրութիւնները զմայլելի են:

1895—1897 չարագուշակ թւականն է; ՓԱՐԱՄԱԶԸ իր խմբերի գլուխը անցնելով՝ 13 անեղ ճակատամարտներից յետոյ՝ մանում է Վան: Հազիւ մի քանի ամիս անցած՝ նա ձերբակալում է իր ընկերներով (Ազատ Ռոտանիկը մէկն է իր զինւորներից), դատապարտում է կախսովանի: Ազատում է Ռուսաց և Ֆրանսիական կառավարութեանց տեղական ներկայացուցիչների ազդու միջամտութեան չնորհիւ: Փարամազի այդ ժամանակւայ արտաստանած ճառը կը մնայ մի զլու խոգործոց՝ Հայ յեղափոխական պատմութեան

էջերի մէջ։ Պատմական այդ գրւագը մեր միւս նահատակ Ասօն՝ արձանագրել է իր «Դատաստան» անունով գրքոյնի մէջ։

Փարամաղ ուղարկւում է Ռուսաստան, բանտարկում է, ազատ է արձակւում։ իր գործունէութիւնը շարունակւում է։

Եթէ 1887ին ծնւել էր Հնչակեան կուսակցութիւնը, 1899ին նա վերածնւել էր։ Այդ վերածնունդի մէջ էլ որոշեալ և մէծ բաժին ունի Փարամաղը։

Գոլիցինեան շրջանն է։

Խլուում են հայ եկեղեցական, դպրոցական կալուածները։

Փարամաղը Բագուից ճանապարհ է ընկնում, անցնում է մի քանի հազար հոգուց բաղկացած պատգամաւորութեան գլուխը՝ Ս. Էջմիածին, Հայրիկի առաջն է կանգնում և արտասանում ընդգիմութեան պահանջագիրը՝ յանուն Հնչակեան կուսակցութեան, յանուն ամբողջ Հայ Ազգի։ Փարամաղը, ժողովրդական այդ հոետորը, հայ Դանտօնը, նա այդ ճառի մէջն է՝ թերը, կուրծքը, սիրտն ու հոգին բացած . . . ։

Եկեղեցակալուգրոցական գոյքերի յափշտակութեան առթիւ առաջ եկած ընդհարումների, կոխների մէջ՝ Փարամաղի սիրազործութիւնները միայն սչանչացում կարող են բերել։ Նա ամենուրէք է թուչած։

Գոլիցինը նրգուում է մի հայ չի թողնել զովկասի մէջ և բոլորին Թիւրքիստան փոխազրել։

Ու Փարամաղը կողմակերպում է Գոլիցինի աշխարհադղորդ տեսորական գործը, որ հայ յեղափոխական կեանքի մէջ կը մնայ մի անթառամ էջ։

Ակաւում է Հայ-Թաթարական կոխւը Շուշիի Զանգեղուրի շրջանների հրամանատարը Փարամաղն է,

Հայ հերոսական կուի այդ գրւագի մէջ՝ ժողովը -

դական ճշմարիտ հերոս է նա դառնում: Նա ո՛չ քիչյն հազարաւորների կեանքն է փրկում, թշնամուն ջախ-ջախում, այլ իր մեծահոգութեան, իր տղամարդութեան պատճառով՝ յարգւում է նո՞յն ինէ իր երէկւայ թշնամիներից: Զանգեզուրի շրջանի մատեար ժողովուրդը (1906) հազարաւոր ստորագրութիւններով՝ տասնեակ համախօսականներ, հարիւրաւոր շնորհաւ կայտկան նամակներ ունի թափած Ս. Դ. Հնչակեան Կուռակցութեան կեդրոնական Վարչութեան՝ Փարամագի կատարած գործերի, առաքինութիւնների համար:

Երեւանի այդ ժամանակւայ նահանգսպետը, Ժէնէրալ Նապօլիօնը, նրա ձակատը համբուրեց, նրա ձիու ասպանդակը բռնեց, ձի հեցցրեց ու յետեւից «ի՞նչ երաշալի մարդ ե» ազագոկեց:

1905—1907 ին Հնչակեանութեան մէջ ծագում է զագափարի ուժեղ անհամաձայնութիւն որ սպանում է բազարակական դառնալ: Բնկերների մէկ մասը ուրոշում է թողնել Տաճկահայկական Դատը և Ռուս Խօցիու-Թէմօկրատների հետ միանալով՝ բացառապէս, Կովկասով, Ռուսաստանով զբաղւել: Ատար մասը հաւատարիմ է մնում Տաճկահայ Դատին, Փարամագը ոյս վերջինի սիւներից մէկը եղաւ:

Եկատ «Միտհատեան Սահմանադրութիւնը», Փարամագը Տաճկաստան է վազում: Պօլսոյ և շրջակայից մէջ նու երեսն է զալիս՝ որպէս ուժեղ պրօպականդիստ:

Տեղի է ունենում Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Զ. րդ Պատգամաւորական Ժողովը՝ կ. Պօլսոյ մէջ:

«Օսմանականութեան» զաղափարը պէ՞տք էր բնուզունիւ թէ ո՛չ: «Էտատիհատչի դէմ անողոք պայքար պէ՞տք էր մղել՝ թէ ո՛չ. 75ի միջից միայն երեք հոգի էին, որ Կուսակցութեանս սկզբունքները անվիճար

պահեցին և յառաջացրին «Հակախտտիհատականութեան», «հակառամանականութեան» ծանօթ որոշումը: Այդ երեքի միջից մէկն էլ Փարամազն էր:

Թէև ծերացած, բայց նա ներկայացուցչի պաշտօնով գնում է Տիգրանակերտ, Խորբերդ, Մալաթիա, Կիլիկիա, Վերջերս՝ Վասպուրական, Կարին: Այդ շրջանների հայութիւնը կենդանի վկայ է նրա բեղմնաւոր գործունէութեան:

1913 Սեպտեմբերի 7ին, Քէոսթէնճէի մէջ՝ կայանում է Հնչակեան Առևսակցութեան է.րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը: Համեստ այդ ժողովը իր որոշումներով, հետեան քններով, առանձին դարագլուխ է կազմում Հայ յեղափոխական պատմութեան մէջ՝ ընդհանրապէս, Ա. Ֆ. Հնչակեան Առևսակցութեանը՝ մասնաւորսպէս:

Այդադի էր, որ որոշւեց Կուսակցութիւնը դնել հակաօրինականութեան (illegalisme) վրայ ու պաշտպանել «Հայատանի բաղաբական ինքնավարութիւնը՝ անջատ Թիւրքիայից»:

Դա մի պատմական որոշում էր: Վանից՝ այդ Պատգամաւորական Ժողովին ուղղւած էր Փարամազի նամակը, որով նա պահանջ էր գնում Յեղափոխական ուղին, հակաօրինականութիւնը ընդգրկել, դա մի վաւերաթուղթ է, որ ապագայ սերունդների համար դասական ընթերցանութեան նիւթ կարող է ծառայել. իսկական Պարամազը այդ տողերի մէջն է:

Է. րդ Պատգ. Ժողովը միաձայնութեամբ Փարամազին ընտրում է Կեդրոնական Վարչութեան անդամ:

Հաղիւ 2—3 ամիս Պարիզի մէջ, նա իր առաջին, նւիրական պարտականութիւնն է համարում նորից Տաճկաստան մանել և Պատգ. Ժողովի յեղափոխական, ապստամբական որոշումները գործադրել:

«Խեցնավար Հայաստան՝ սնջաւ Թիւրքիայից».— գաղափարաբանը՝ առաջինը ինքը, եղաւ, որ իր կեանքը զոհաբերեց իր գաղափարի իրականացման համար։ Միթէ՞ այդպէս չէր արել Յիսուսը, Սոկրատէսը. . . .



# ԱՍԾ

## ՏԻԳՐԱՆ ՕՏԵԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԽԱՄԱՆՈՅ ՃԱՅՈՐՈՒՅԻՆ)

Ասօ ծնած է 1880ին Վան: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Յանկոյս գպրոցին մէջ: Իր փոքր հաստիին մէջ որպէս Հոչակեան կր հետեւի յեղափոխութեան փշոտ ճանապարհը, կր կողմանկերպէ խումբեր վանի և զիւղերուն մէջ: 1890ին նա ուրդէն անցած էր Պարսկաստան, ուր կը վարէ ուսուցչական սլաշտօնք մինչեւ 1906: Նա որպէս ուսուցիչ և կուսակցութեան փրօփականդիտուն մեծ ուժ կուտասէ կողմակերպութեան: Իր ձեռքին տակ կը մեծցնէ 10 տարւան մատադ սերունդ մը որպէս յեղափոխական: Հընչակեան խմբագետ Տօնօի հետ կը կազմակերպէ շատ մը խումբեր, որք մասնակցեցան հայոթաթարական կուիներուն ու Պարսկաստանի յեղափոխական շարժումներուն: Նա իր շրջանին մէջ բեղուն գործունէութեամբը նւիրւած էր Հայ ցաւին ու տառապանքին, դէնքին հետ կը շարժեր գրեի, առակերտացնելով ցնդին կարմիր ու սև օրերը, նաև վիալ սկան կառուներով պարզելով ընկերային անարդար գրութիւնը: Իր շարունակական աշխատակցութիւնը տևած է «Հօչակ», «Երիս» Հայաստան, «Վերամնարիւն», «Լրաբեր» Հընչակեան թերթերուն: Նա պարբերաբար զրած է «Ար-

մէնիա», «Մուրն», «Մօսկ», «Բիւզանդիոն», «Վանասպ» և «Աւրատանք» թերթերուն զանազան ստորագրութ / ւններով:

Օսմանեան սահմանադրական շրջանին կուգայ Պօլիս, ուր գարձեալ որպէս անխոռչ գործիչ կը շրջի մասնաճիւղերուն կազ Խակերպելով ու շգասախօսելով՝ իր խմբագրութեամբ երկու տարիի չափ կը հրատակէ «Երկիր» թերթը յանդու գն պայքար մղելով իթթիհատ բոնապետութեան դէմ և մաքառելով ազգային յետամեաց ու պահպանողական մտքերուն դէս։ Առեն մը յետոյ, գործը զինք իր ծննդավայրը փոխազրած էր ուր ընկ։ Փարամազի և Յրուտեանի հետ կոկսին պատրաստել ապագայ ապատամբութեան մը յատկագիծը՝ Երեք աննման գործիչներու չորրիւ Վան կըսթափի ու կը ճանչնայ Հայուն բուն ոխերիմները՝ իթթիհատ կառավարութիւնը ու անոր գործակից տեղւոյն աշիրաթները։ Հայաստանի խորէն և Երիտ, Հայաստանին կը զրէ երկրի գառնաղէտ դրութիւնը։ անխնայ կը հարւածէ կառավարութիւնը, պէյերն ու աղաները։

Ասօ իր ընկերներուն հետ տիրող րէժիմի աչքին փուշը կը դառնայ և Պօլսոյ մէջ Հնչակեան ականաւոր գործիչներու ձերբակալման հետ ինք ալ կը ձերբակալուի Վանի մէջ։

Բանտային գժոխսք կեանքը ապրելէ յետոյ, Վանի ազատագրական կոխւներու միջոցին Ասօն վայրագ առիւծի ժանիքներուն մէջ կը խողխողւի իր բանտակից ընկերներուն հետ։

Ասօն հեղինակած ունի նաև շարք մը յեղափոխական ու վիպական գրքոյկներ, որք են «Կարմիր Օրեր», «Հաւսե», «Դատաստան», «Վահե», «Դիւցազնունին» և այլն։ Նա առաջին Սօցիալ Դէմօկրակ վիպաստանն է և պրոլետարներու նւիրւած երգիչը։

Համիտական բռնապետութեան և Ռուսական միապետութեան հալածունքը դարձուցին իր կեանքը փշոտ օրերու երկար տողանցք մը : Նա ձարական ու թրքական բանտերու մէջ աւելի կատաղած, իր ներքին զայրոյթը հռուցուց զրիչով և բեմով բռնապետներու գէմ, հալածողներու գէմ:

Վանի ազատութեան փողփողացող արշալոյսի կարմիր ճանանչները իր արեան ցոլքերէն ալ փշուրներունէին:

Ա. Կ.



6282

2013

